FRIEDRICH NAUMANN FOUNDATION For Freedom.
Հայաստան

HELSINKI CITIZENS ASSEMBLY

ISNC

ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ. ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Անվտանգության մարտահրավերնե՞ր, թե՞ մարտահրավերներ անվտանգության համար 2022

Հոդվածների ժողովածու

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 32(082)
ԳՄԴ 66.0g43
Հ 247

Հրատարակող
Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամի
հայաստանյան գրասենյակ
ՀՀ, 0009, ք. Երևան, Խ. Աբովյանի փ. 41, գրաս.11

Կայք - https://www.freiheit.org/south-caucasus
Facebook - https://www.facebook.com/FNFArmenia

Հեղինակներ
Մ. Զոլյան, Է. Ավդալիանի և ուրիշներ

Թարգմանիչ (անգլերենից հայերեն)
Սամվել Ռուբենյան

Թարգմանիչ (վրացերենից հայերեն)
Ասյա Դարբինյան

Խմբագիր
Սեդա Մեսրոպյան

Հայերենի էջադրում
Արուսյակ Օհանյան

Տառատեսակ
HayRoboto

Հրապարակման տարեթիվ
2022 թ.

Հայաստան-Վրաստան հարևանություն. փորձագետների երկխոսություն - Անվտանգության մարտահրավերնե՞ր, թե՞ մարտահրավերներ անվտանգության համար 2022 – Մ. Զոլյան, Է. Ավդալիանի և ուրիշներ

Սույն ժողովածուում ներկայացնում է «Հայաստան-Վրաստան հարևանություն. փորձագետների երկխոսություն - Անվտանգության մարտահրավերնե՞ր, թե՞ մարտահրավերներ անվտանգության համար 2022» միջոցառման զեկուցողների հոդվածները: Միջոցառումը կայացել է 2022 թ. սեպտեմբերի 15-17 Թբիլիսի քաղաքում: Հոդվածները վերլուծում են Հարավային Կովկասի ներկայիս անվտանգության մարտահրավերները, հատկապես 2020 թ. Ղարաբաղյան պատերազմից հետո և Ուկրաինայում ներկայումս ընթացող հակամարտության պայմաններում: Միջոցառումը կազմակերպել են Ազգայնականության և հակամարտությունների ուսումնասիրության ինստիտուտը (Վրաստան), Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի հայաստանյան կոմիտեն (Հայաստան) և Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամի Հարավային Կովկասի գրասենյակը:

Սույն հրապարակումը հնարավոր է դարձել Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամի աջակցությամբ: Սույն հրապարակման մեջ տեղ գտած կարծիքների և դիրքորոշումների համընկնումը Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամի հետ պարտադիր չէ:

© Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամի հայաստանյան գրասենյակ, 2022
© Ազգայնականության և հակամարտությունների ուսումնասիրության ինստիտուտ
© Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի հայաստանյան կոմիտե

ISBN 978-9939-1-1586-3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

ՄԵԶ ՇՐՋԱՊԱՏՈՂ ԱԼԵԿՈԾՈՒՄՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՐՀԻՆ ՈՒ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ 9

Միքայել Զոլյան
ՀԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ, ՆՈՐ ՊԱՏՈՒՄՆԵՐ. ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՆ ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ 10

Էմիլ Ավդալիանի
ՉԻՆԱՍՏԱՆԸ, ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՎ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ» ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՓՈՐՁԵՐԸ 17

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ, ԹԵ՞ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ: ԻՆՉԻ՞Ն ՍՊԱՍԵԼ ... 27

Զուրաբ Մենագարիշվիլի
ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՎՐԱ 28

Հայկ Թորոյան
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՊՈՏԵՆՑԻԱԼ ԴԵՐԸ ԸՆԹԱՑԻԿ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 36

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ՎՐԱՍՏԱՆ. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՈՒՍԻ, ԹԵ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻ ՀԱՄԱՐ 47

Աննա Գևորգյան-Դավթյան
ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԻՑ ԱՆԴԻՆ. ԱՄՈՒՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԹՈՒՅԼ ԿԱՊԵՐՈՎ 48

Դավիդ Բրագվաձե
ՎՐԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ԱՌՋԵՎ 56

ՀԱՅԵՐՆ ՈՒ ՎՐԱՑԻՆԵՐԸ. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՆՀԱՏՆԵՐԸ 2022 Թ. ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 65

Շորենա Կոբաիձե
ՎՐԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿՆ ՈՒ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ 66

Արմեն Օհանյան
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՎՏԱՆԳՎԱԾ ԱԶԳԱՅԻՆԸ 77

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ձեր առջև զեկուցումների մի ժողովածու է, որում ամփոփված են 2022 թ. սեպտեմբերի 15-17-ը Թբիլիսիում կայացած «Հայաստան-Վրաստան հարևանություն. փորձագետների երկխոսություն - Անվտանգության մարտահրավերնե՞ր, թե՞ մարտահրավերներ անվտանգության համար 2022» վրաց-հայկական փորձագիտական երկխոսության մասնակիցների զեկույցները, և որի կիզակետում էին հանրային ընկալումներում տարածաշրջանային, երկկողմ անվտանգության հարցերն ու մարտահրավերները և դրանք հաղթահարելուն ուղղված ջանքերը:

Վրաց-հայկական փորձագիտական երկխոսությունը եզակի է իր բնույթով: Այն գոյություն ունի արդեն ութերորդ տարին, և դրա շրջանակներում հանդիպումները տեղի են ունենում պարբերաբար, հերթով՝ Երևանում և Թբիլիսիում, մի քանի ամսվա դադարներով: Այս ձևաչափը նախաձեռնվել է վրացական և հայկական քաղաքացիական հասարակական կազմակերպությունների կողմից, որոնք 2018 թ. Վրաստանից ներկայացնում է Ազգայնականության և հակամարտությունների ուսումնասիրության ինստիտուտը, իսկ Հայաստանից՝ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Հայաստանյան կոմիտեն: Երկու գործընկեր կազմակերպություններն էլ ունեն Հարավային Կովկասում տարածաշրջանային համագործակցության և խաղաղարարության ոլորտների տարբեր մակարդակներում ու ձևաչափերով աշխատանքի կենսական փորձ:

Այդպիսի փորձագիտական ֆորումն ընտրվել է երկկողմ՝ հայ-վրացական և տարածաշրջանային խնդիրներով զբաղվող հայ և վրացի փորձագետների առավել սերտ համագործակցության և ավելի լայն հանրության ներգրավելու նպատակով՝ այնպիսի հարցերի քննարկմանը, որոնք կենսական կարևորություն ունեն ինչպես երկու երկրներից յուրաքանչյուրի, այնպես էլ առհասարակ տարածաշրջանի համար: Անվտանգության, ժողովրդավարական զարգացման, տնտեսության, մարդու իրավունքների, մեդիայի հարցերը, հասարակության մեջ առկա միտումները, ընտրական գործընթացները

և կողմնորոշման նախագծերը բաց և խորությամբ քննարկվել են տվյալ երկխոսության շրջանակներում: Ու թեպետ մասնակիցները տարբեր հայացքներ են ունեցել և տարբեր կերպ են գնահատել այն դեպքերը, որոնք տեղի են ունեցել մեր երկրներում, հենց հայացքների ու նաև գնահատականների տարբերությունը և բազմամակարդակությունը մտածելու և ապագա հաղորդակցության խողովակներ ստեղծելու տեղիք են տվել:

Աստիճանաբար, Վրաց-հայկական փորձագիտական երկխոսության ձևաչափին միացել են նոր սերնդի փորձագետներ՝ այդ կերպ ընդգծելով ձևաչափի ամրությունը և անհրաժեշտությունը. չէ՞ որ մշտապես գործող այդպիսի հարթակ ստեղծելու նպատակներից մեկը նմանատիպ հարցերով զբաղվող և սերտ մասնագիտական ու մարդկային հարաբերություններ չունեցող նոր սերնդի գիտնականների և վերլուծաբանների միջև փոխհարաբերությունների բացը լրացնելն էր:

Մեր Երկխոսությունը դիմացավ COVID-19-ի համավարակի հետ կապված սահմանափակումներին և օգտագործելով օնլայն-հարթակները՝ չդադարեցրեց իր գործունեությունը: Իսկ այս տարի, մեկուկես տարվա վիրտուալ համագործակցությունից հետո, կայացավ արդեն ֆիզիկապես՝ աշխարհի, տարածաշրջանի և երկկողմ համատեքստում անվտանգության հարցեր քննարկելու համար:

Ձեզ ներկայացվող զեկուցումները տարբեր դիտանկյուններից են փորձում դիտարկել այդ հարցերը և գտնել ինչպես շահերի համընկնումներ, այնպես էլ տարբերվող պահեր:

Մենք շնորհակալ ենք Ֆրիդրիխ Նաումանի հիմնադրամին և Հարավային Կովկասում նրա ներկայացուցչությանը՝ Վրաց-հայկական փորձագիտական երկխոսության տևական աջակցության, գաղափարներ խթանելու, ժողովրդավարության և ազատական արժեքների ուղղությամբ ուշադրությունը սևեռելու համար, որոնց վրա էլ հիմնվել և շարունակում է զարգանալ մեր ձևաչափը:

Հատուկ շնորհակալություն պրոֆեսոր Ալեքսանդր Իսկանդարյանին և «Կովկասի ինստիտուտին», որոնք կանգնած են եղել սույն ձևաչափի ստեղծման ակունքներում և անգնահատելի ավանդ են ներդրել նրա զարգացման գործում:

Նինո Կալանդարիշվիլի
Ազգայնականության և հակամարտությունների

Նատալյա Մարտիրոսյան
Հելսինկյան քաղաքացիական ուսումնասիրության ինստիտուտ ասամբլեայի հայաստանյան կոմիտե

ՄԵՋ ՇՐՋԱՊԱՏՈՂ ԱԼԵԿՈԾՈՒՄՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՐՀԻՆ ՈՒ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

ՀԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ, ՆՈՐ ՊԱՏՈՒՄՆԵՐ. ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՆ ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

Միքայել Զոլյան

Աշխարհում ուկրաինական պատերազմի հետևանքով առաջացած մեծ տուրբուլենտությանը զուգընթաց՝ Հարավային Կովկասը բախվում է անվտանգության նոր մարտահրավերների, որոնք մանևրելու քիչ տեղ են թողնում Հայաստանի և Վրաստանի կառավարությունների և հասարակությունների համար: Քանի որ երկու երկրներն էլ բախվում են նոր և հին սպառնալիքների, Հայաստանի և Վրաստանի կողմից արձագանքելու հնարավորությունները սահմանափակ են: Այս հնարավորությունները հաճախ պահանջում են, հատկապես Հայաստանի դեպքում, վերագնահատել ոչ միայն արտաքին քաղաքական հնարավորությունները, այլ նաև պատումները, որոնք տասնամյակներ կամ նույնիսկ դարեր շարունակ դարձել են նրանց ազգային ինքնության մի մասը: Վերջին զարգացումները սկիզբ են դրել մեր երկրների աշխարհաքաղաքական միջավայրի և պատմական ժառանգության վերագնահատման մի գործընթացի, որն արտահայտվել է նոր (կամ մասամբ նոր) պատումների առաջացմամբ՝ ձգտելով վերաիմաստավորել ազգային ինքնություններն ու պատումներն այնպես, ինչը թույլը կտա արձագանքել առկա մարտահրավերներին: Այս միտումները նաև նշանակում են, որ Հայաստանն ու Վրաստանն այսօր կարող են շատ ավելի ընդհանրություններ ունենալ, քան եղել է հետխորհրդային շրջանի մեծ մասում:

Ուկրաինայի պատերազմը ցնցումներ է առաջացրել ամբողջ աշխարհում: Այն նաև լուրջ (կարելի է ասել՝ էկզիստենցիալ) մարտահրավերներ է ստեղծել նաև Հարավային Կովկասի երկրներից առնվազն երկուսի՝ Հայաստանի և Վրաստանի համար: Հետխորհրդային տարածաշրջանում Ռուսաստանի հետգաղութային գերակայության հնարավոր փլուզումը, թեև երկարաժամկետ կտրվածքում ձեռնտու է թե՛ Հայաստանին, թե՛ Վրաստանին, կարող է նոր սպառնալիքներ բերել կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում: Վրաստանի դեպքում դա ռուսական էքսպանսիայի վտանգն է, որի դեմ վրացիները պայքարել են իրենց անկախության

ողջ ընթացքում, հատկապես 1990-ականների սկզբին և 2008 թվականի պատերազմի ժամանակ, և որն այսօր ուժգնացել է, քանի որ Կրեմլը կարծես թե բարձրացնում է իր խաղադրույքները Արևմուտքի հետ իր առճակատման ընթացքում: Հայաստանի համար սպառնալիքներն ավելի բազմակողմանի են ու բարդ: Ակնհայտ սպառնալիքները բխում են Ադրբեջանի և Թուրքիայի հետ հակամարտությունից, մինչդեռ մեկ այլ սպառնալիք, որը կարող է ավելի քիչ ակնհայտ լինել, սակայն, համենայնդեպս, որոշ վերլուծաբանների կարծիքով, առնվազն նույնքան լուրջ է՝ Կրեմլի նեոիմպերիալիստական ամբիցիաների արդյունքում Հայաստանի ինքնիշխանությանը սպառնացող վտանգը (որն անվանել են «ԽՍՀՄ 2.0»):

Ե՛վ Վրաստանը, և՛ Հայաստանը խիստ սահմանափակված են այս մարտահրավերներին արձագանքելու իրենց հնարավորություններում: Երկու երկրներում էլ կառավարությունները պետք է չափազանց զգույշ վարվեն: Վրաստանը, չնայած եվրաինտեգրմանը և Արևմուտքի հետ դաշինքին, չափազանց զգույշ է, որպեսզի չբարկացնի հյուսիսային հարևանին և թույլ չտա ագրեսիվ քայլերի պատճառաբանություն: Հայաստանի պարագայում իրավիճակը ավելի է բարդանում նրանով, որ երկիրը հիմնականում միայնակ է իր ինքնիշխանության և գոյատևման համար պայքարում: Հայաստանի ենթադրյալ դաշնակից Ռուսաստանը, թեև նախկինում որոշակի պաշտպանություն է տրամադրել, այդ պաշտպանության համար բավականին թանկ գին է ստացել, ինչն, ի վերջո, կարող է նույնիսկ ավելի վտանգավոր լինել, քան այն սպառնալիքները, որոնք պետք է չեզոքացներ այդ պաշտպանությունը: Ամեն դեպքում, այսօր պաշտպանության մակարդակը չի համապատասխանում հայկական ակնկալիքներին՝ թողնելով նրան միայնակ՝ դիմակայելու Ադրբեջանին հնարավոր հակամարտության ընթացքում: Ավելին, այսօր շատ դիտորդներ կարծում են, որ նույնիսկ եթե ինչ-որ օգուտներ կային նախկինում, այսօր Ռուսաստանի հետ շարունակվող «անվտանգության դաշինքը» ավելի շատ վնաս է տալիս Հայաստանին, քան օգուտ: Այնպես որ այս իրավիճակում Հայաստանը շուտով կարող է այլ ելք չունենալ, քան հեռանալ ռուսական գերիշխող ազդեցությամբ հետխորհրդային ինստիտուտներից, մասնավորապես՝ ՀԱՊԿ-ից: Սակայն, եթե դա արվի, ապա Հայաստանը ստիպված կլինի դիմակայել թե՛ Ուկրաինայում պարտված, բայց Հայաստանի նման փոքր երկրին ջախջախելու համար դեռ բավականաչափ ուժեղ

Կրեմլին, թե Անկարայի և Բաքվի համատեղ սպառնալիքներին, որոնք կարող են օգտագործել առաջացող ուժային վակուումը՝ Հայաստանի նկատմամբ իրենց ագրեսիվ քաղաքականությունն առաջ տանելու համար:

Այսպիսով, Վրաստանի և Հայաստանի կառավարությունների կողմից իրականացվող քաղաքականությունները բալանսավորում են զգույշ հռետորաբանության, հարկադիր զիջումների և համառ դիմադրության միջև: Երկու կառավարություններն էլ դիմադրում են իրենց հարևանների կողմից եկող ագրեսիվ ազդակներին, այնքանով, որքանով դա հնարավոր է՝ միաժամանակ փոխզիջումների գնալով այնտեղ, որտեղ դա անհրաժեշտ է: Գործնականում՝ դա նշանակում է, որ Վրաստանի կառավարությունը շարունակում է իր եվրոպամետ/արևմտամետ քաղաքականությունը՝ միևնույն ժամանակ անում է հնարավորը՝ ռուսների հետ անհարկի առճակատումից խուսափելու համար: Ինչ վերաբերում է Հայաստանի իշխանություններին, ապա նրանք շեշտում են Ադրբեջանի հետ տևական խաղաղության, Թուրքիայի հետ հարաբերություններ հաստատելու անհրաժեշտությունը, միևնույն ժամանակ անում հնարավորը՝ հայ-ադրբեջանական սահմանին (որը դեռ պետք է անցնի սահմանազատման և սահմանագծման գործընթացի միջով) ադրբեջանական հարձակումները ետ մղելու ուղղությամբ: Այն նաև փորձում է ամրապնդել Հայաստանի պաշտպանունակությունը 2020 թվականի հակամարտությունում կրած աղետալի պարտությունից հետո, մասնավորապես՝ գտնելով նոր գործընկերներ, որոնք կարող են փոխարինել Ռուսաստանին: Մասնավորապես, Հայաստանը նաև շարունակում է իր ոչ բարձրագոչ, բայց համառ դիմադրությունը Հայաստանի հարավում արտատարածքային միջանցք ստեղծելու ռուս-ադրբեջանա-թուրքական նախագծին (դիրքորոշում, որը գոնե տեսականորեն պետք է համընկնի վրացական, իրանական և արևմտյան շահերի հետ): Միևնույն ժամանակ, երբ խոսքը վերաբերում է Մոսկվայի հետ իր հարաբերություններին, Հայաստանը խուսափում է բացահայտորեն խոսել դաշինքից դուրս գալու մասին, քանի որ գիտակցում է, որ նույնիսկ թուլացած Ռուսաստանը դեռևս հսկայական հնարավորություններ ունի Հայաստանին վնաս պատճառելու և, հետևաբար, կարող է մեծ գին կորզել այն բանի համար, ինչը կարող է Հայաստանի իշխանության կողմից կատարված դավաճանություն համարվել:

Այս տեսակի արտաքին քաղաքականությունը նորանկախ երկրներում ժողովրդականություն չի վայելում, քանի որ հասարակությունը սահմանափակ կերպով է հասկանում միջազգային քաղաքականությունը, իսկ արտաքին քաղաքականության պոպուլիստական կոնցեպտները ամենաշատ ուշադրությունն են ստանում լրատվամիջոցների և ակտիվիստների կողմից: Զիջումները և զուսպ հռետորաբանությունը, որոնց վերաբերյալ կառավարություններին քննադատում են հասարակությունների ներսում, նրանց դարձնում են խոցելի ինչպես լեգիտիմ քննադատության, այնպես էլ պոպուլիստական մանիպուլյացիայի համար: Այնուամենայնիվ, բացի կառավարությունների արտաքին քաղաքականության վերաբերյալ պոպուլիստական քննադատությունից, հայ և վրացական հասարակություններում տեղի են ունենում նաև արտաքին քաղաքականության վերաբերյալ հետաքրքիր և պոտենցիալ արդյունավետ բանավեճեր: Հասարակությունները նոր իրավիճակին և նոր մարտահրավերներին արձագանքում են հռետորաբանության և պատումների մակարդակով, որոնք իրենց հերթին արտացոլում են ինքնությունների վերափոխման գործընթացը հետխորհրդայինից դեպի նոր վիճակի, որը կարելի է անվանել հետխորհրդային: Իրավիճակը, որն այսօր կա, պահանջում է նոր ձևակերպում և նոր պատումներ, քանի որ հետխորհրդային աշխարհայացքն այլևս չի օգնում հասկանալու, թե ինչ է կատարվում և ինչու: Ինքնություններն ու պատումները, որոնք գոյություն ունեն տասնամյակներ, իսկ որոշ դեպքերում՝ դարեր շարունակ, անցնում են քննադատական վերագնահատման և վերանայման միջով: Սա հատկապես վերաբերում է Հայաստանին, որտեղ Ռուսաստանի՝ որպես անվտանգության երաշխիքի հետ դաշինքի դարավոր գաղափարը ենթարկվում է քննադատական վերագնահատման: Հայ հասարակությունը հաշտվում է այն իրողության հետ, որ Ռուսաստանը ոչ միայն չի կարողանում կամ չի ցանկանում ապահովել իր ենթադրյալ դաշնակիցների անվտանգությունը, այլև ավելին՝ որ Ռուսաստանի և Հայաստանի հարաբերությունները երբեք հավասար դաշնակիցների հարաբերություններ չեն եղել, այլ եղել են հետգաղութային կախվածության ձև:

Նոր իրականության մի ինչ-որ չափով անսպասելի տարր, որը դեռ պետք է կոնցեպտուալ առումով ձևավորվի մեր հասարակությունների կողմից, ռուս «վերաբնակների» հոսքն է, որը նշանակալի գործոն է

դարձել քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային ոլորտներում: Այս ներհոսքը Հայաստանում և Վրաստանում առաջացրել է տարբեր արձագանքներ, որոնք ցույց են տալիս երկու երկրների և՛ նմանությունները, և՛ տարբերությունները: Մի կողմից՝ այս «վերաբնակների» դիտարկումն է որպես ռուսական սպառնալիքի նոր «վերամարմնավորում», մյուս կողմից՝ «վերաբնակներին» դիտարկելը որպես պոտենցիալ դաշնակիցների՝ մեր երկրների հզորացման և նույնիսկ ռուսական իմպերիալիզմի դեմ պայքարի հարցում:

Ինչ վերաբերում է նոր պատումներին, ապա ուկրաինական պատերազմի համատեքստում մեկ այլ հետաքրքիր զարգացում է հետգաղութային դիտանկյան ի հայտ գալը, որի միջոցով դիտարկվում է հետխորհրդային փորձը (շնորհակալություն այս նկատառման համար Օլգային՝ ռուս հակապատերազմական ակտիվիստին, որը Սանկտ Պետերբուրգից տեղափոխվել է Հարավային Կովկաս): Սա դեռևս ձևավորվող միտում է, բայց այն զգալի ներուժ ունի: Սառը պատերազմի ժամանակ և դրանից հետո նույնիսկ խորհրդային համակարգի ամենակատաղի հակառակորդները միշտ չէ, որ ԽՍՀՄ-ի ոչ ռուս ժողովուրդների վիճակը գաղութատիրություն են համարել՝ գաղութատիրության և կապիտալիզմի միջև կապի պատճառով, որը կիրառելի չէր ԽՍՀՄ-ում: Այնուամենայնիվ, Մոսկվայի և նախկին խորհրդային պետությունների հարաբերությունների հետխորհրդային մոդելը բազմաթիվ զուգահեռներ է մատնանշում նախկին գաղութային կայսրությունների և նրանց նախկին գաղութների միջև հարաբերությունների հետգաղութային օրինաչափությունների առումով, հատկապես այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են բնական ռեսուրսների շահագործումը և էժան աշխատուժը, քաղաքական, մշակութային և տնտեսական գերիշխանությունը, ռասիզմը և այլն: Սակայն այս իրողությունը հաճախ հասկանալի չէր արտաքին դիտորդների համար, քանի որ շատերը, հատկապես Արևմուտքում, նախընտրում էին Ռուսաստանին տեսնել որպես հուսալի, թեև բարդ գործընկերոջ, այլ ոչ թե՝ ագրեսիվ ռեւանշիստական պետության, որը ձգտում էր վերաստեղծել իր նախկին կայսրությունը: Հենց Ռուսաստանի նեոիմպերիալիստական հավակնությունների անտեսումն էր, որ Վրաստանի համար այդքան դժվարացրեց միջազգային հանրությանը բացատրելը 2008 թվականի պատերազմի իրական պատճառները, քանի որ Արևմուտքում որոշ դիտորդներ նույնիսկ մեղադրեցին վրացական կառավա-

ությանը ռուսներին «սադրելու» մեջ: Սակայն այսօր իրավիճակը փոխվել է: Վերջին ներխուժումն Ուկրաինա օգնեց բարձրացնել ռուսական իմպերիալիզմի և գաղութատիրության հարցը և թույլ տվեց հետխորհրդային ժողովուրդներին ձևակերպել իրենց փորձը հակագաղութային և հակաիմպերիալիստական դիմադրության մասով: Այս պատումը թափ է հավաքում և՛ Հայաստանում, և՛ Վրաստանում, այս փուլում հիմնականում ակտիվիստների և մտավորականների շրջանում, սակայն այն ունի ներուժ՝ մտնելու քաղաքական տարածք և ձևավորելու այս երկրների պատումներն ու ինքնությունները առաջիկա տարիներին:

Այս ֆոնին գնալով ակնհայտ է դառնում, որ Հայաստանն ու Վրաստանն ունեն ընդհանուր շահեր: Երկու երկրներն էլ կանգնած են զգալի սպառնալիքների առջև, առնվազն մասնակիորեն նույն արտաքին դերակատարների կողմից: Եթե նախկինում Վրաստանն անվտանգության առումով հույսը դնում էր Արևմուտքի վրա, իսկ Հայաստանը կախված էր Ռուսաստանից, ներկայումս Հայաստանն անցնում է իր արտաքին քաղաքականության վերակողմնորոշման գործընթացով, ինչը նոր հնարավորություններ է բացում Վրաստանի հետ համագործակցության համար: Նաև Հայաստանի նոր «խաղաղության օրակարգը» պահանջում է երկարատև խաղաղություն հաստատել իր հարևանների՝ Ադրբեջանի և Թուրքիայի հետ, և այս համատեքստում Վրաստանը, Թուրքիայի և Ադրբեջանի հետ իր սերտ հարաբերություններով, կարող է կարևոր դեր խաղալ որպես բարեկամ միջնորդ: Վերջապես, և՛ Հայաստանը, և՛ Վրաստանը որդեգրել են կառավարման ժողովրդավարական մոդելներ՝ ընտրություն, որը խորը արձագանք է ստանում մեր հասարակություններում և, միևնույն ժամանակ, մեզ առանձնացնում է մեր հարևանների մեծամասնությունից: Ժողովրդավարական մոդելին հավատարմությունը տարածաշրջանում, որտեղ ժողովրդավարությունը հազիվ թե կառավարման գերիշխող ձևն է, նույնպես պետք է մեզ ավելի մոտեցնի: Միևնույն ժամանակ, մենք պետք է խոստովանենք, որ Հայաստանի և Վրաստանի միջև հաջող համագործակցությունը երկուստեք ջանքեր է պահանջում: Այո, երկու հասարակությունների միջև կա անհերքելի համակրանք, որը բխում է ընդհանուր պատմական ժառանգությունից և սերտ մշակութային կապերից: Բայց, միևնույն ժամանակ, կան տարբեր կարծրատիպեր և թյուր պատկերացումներ, որոնք հաճախ

պարտադրվում են երրորդ կողմերի և ծայրահեղ ազգայնականների քարոզչության կողմից երկու հասարակություններում, որոնք պետք է լուծվեն, որպեսզի հայ-վրացական համագործակցությունն ավելի ընդգրկուն և արդյունավետ դառնա:

Ամփոփելով՝ նշենք, որ երբ աշխարհը նավարկում է անհանգիստ նոր ժամանակաշրջանով, Հայաստանն ու Վրաստանը բախվում են նոր և հին մարտահրավերների, որոնցից մի քանիսը էկզիստենցիալ վտանգ են ներկայացնում մեր երկրների անկախության, ինքնիշխանության և տարածքային ամբողջականության համար: Այս մարտահրավերներից մի քանիսը պահանջում են արտաքին քաղաքականության բոլորովին նոր մոտեցումներ, որոնք իրենց հերթին պահանջում են երկար ժամանակ մեր երկրների ինքնությունն ու քաղաքականությունը ձևավորած, տասնամյակների պատմություն ունեցող պատումների քննադատական վերագնահատում: Թե՛ ներքին, թե՛ արտաքին վերափոխումների այս ֆոնին մեր երկրները պետք է վերագնահատեն իրենց հարաբերությունները և ձգտեն ավելի սերտ համագործակցության:

Միքայել Զոլյանը *գիտաշխատող է, վերլուծաբան և համալսարանի դասախոս Երևանից: Նրա հետազոտությունները կենտրոնացել են հիշողության քաղաքականության, ազգայնականության, ազգային ինքնության, էթնիկ կոնֆլիկտների, ինչպես նաև զանգվածային բողոքի ցույցերի և ժողովրդավարացման խնդիրների վրա՝ հետխորհրդային համատեքստում: 2018 թվականի հայաստանյան իրադարձություններից հետո Զոլյանը ներգրավվեց ակտիվ քաղաքականության մեջ և 2019-2021 թվականներին Հայաստանի առաջին հետհեղափոխական խորհրդարանում ներկա էր որպես պատգամավոր: Ներկայումս Զոլյանը վերադարձել է ակադեմիա և քաղաքացիական հասարակություն՝ դասավանդելով Երևանի Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանում և որպես խորհրդատու՝ աշխատելով հայկական և միջազգային հասարակական կազմակերպությունների հետ: Նա նաև հաղորդավար է վերջերս ստեղծված հայկական կրթական «Բուն TV» հեռուստաալիքում:*

ՉԻՆԱՍՏԱՆԸ, ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՎ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ» ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՓՈՐՁԵՐԸ

Էմիլ Ավդալիանի

Աշխարհը թեւակոխել է անկայունության նոր շրջան. գոյություն ունեցող ազատական կարգերը կատարյալ ճգնաժամ են ապրում: Հավաքական Արևմուտքին հակադրվողներն ավելի ու ավելի են համախմբվում՝ ձգտելով հասնել արմատական փոփոխությունների ներկա համակարգում: Այդ պետությունների թվում հիմնական խաղացողներն են Չինաստանը և Ռուսաստանը, որոնք հույս ունեն կառուցել նոր հիերարխիկ կամ, ես այն կանվանեի՝ «եվրասիական» աշխարհակարգ, որտեղ քաղաքական հեղինակությունը, զուգորդված տնտեսական և ռազմական հզորության հետ, խոշոր եվրասիական տերություններին հարևան փոքր պետությունների համար խոչընդոտ կհանդիսանա՝ ներգրավելու հեռավոր դերակատարների, հիմնականում՝ Արևմուտքին: Հիերարխիկ աշխարհակարգը, ըստ էության, իրենից ներկայացնում է բացառումների բազմաթիվ փոքր հասարակարգեր, որտեղ փոքր տարածաշրջանները փակ կլինեն արևմտյան ազդեցության նկատմամբ: Կենտրոնական Ասիան,[1] Հարավային Կովկասը[2] կամ Հարավային և Հարավարևելյան Ասիան՝[3] աշխարհագրորեն տարբեր և միմյանցից հեռու այս բոլոր վայրերն ունեն մեկ ընդհանուր բան, այն է՝ ավելի մեծ հարևան պետություններ, որոնք ձգտում են դուրս մղել ոչ տարածաշրջանային տերություններին, մասնավորապես՝ հավաքական Արևմուտքին:

Թեև, ի վերջո, այն, ինչին Չինաստանն ու Ռուսաստանը ցանկանում են հասնել, կլինի Եվրասիայի կենսական ռեսուրսները և ենթակառուցվածքները վերահսկելու աշխարհակարգը, առաջարկվող հիերարխիկ

1 Jardine, B., Lemon, E. (2021). In Post-American Central Asia, Russia and China are Tightening Their Grip. *War on the Rocks*. https://warontherocks.com/2021/10/in-post-american-central-asia-russia-and-china-are-tightening-their-grip/

2 Avdaliani, E. (2021). The South Caucasus and the New Hierarchical Order. Georgia Today. https://georgiatoday.ge/the-south-caucasus-and-the-new-hierarchical-order/

3 Pal, D. (2021). China's Influence in South Asia: Vulnerabilities and Resilience in Four Countries. *Carnegie Endowment for International Piece*. https://carnegieendowment.org/2021/10/13/china-s-influence-in-south-asia-vulnerabilities-and-resilience-in-four-countries-pub-85552

համակարգը, այնուամենայնիվ, իր ազդեցությունը խթանելու և հավաքական Արևմուտքին բացառելու ավելի առաձգական միջոց է: Այն շատ ավելի ճկուն է, քան Խորհրդային Միության կողմից Հարավային Կովկասի, Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի աշխարհաքաղաքական վերահսկողությունը: Հիերարխիան կներառի փոքր պետությունների հետ համագործակցության որոշակի մակարդակ, քանի որ առավել մեծ տերությունները չեն կարողանում միանձնյա գերիշխել փոքր տարածաշրջանների վրա: Հիերարխիան նաև վերաբերելու է ուժերի հավասարակշռության մարտավարության վերականգնմանը և Ռուսաստանին ու Չինաստանին սահմանակից տարածաշրջանները կլանող տնտեսական և ռազմական կազմակերպությունների ստեղծմանը: Այս աշխարհակարգի առաձգականությունն արդեն տեսանելի է Պեկինի և Մոսկվայի կողմից իրենց կապերը պաշտոնական ռազմական և քաղաքական դաշինքների վրա հիմնելուց խուսափելու փաստից: Արևմուտքում շատերը դա համարում են Պեկինի և Մոսկվայի միջև ի վերջո տարբերվող տեսլականների նշան, սակայն ձևավորվող գլոբալ աշխարհակարգում, որտեղ լիբերալ ինտերնացիոնալիզմը նվազում է և, ամենայն հավանականությամբ, կսահմանափակվի միայն աշխարհի որոշ շրջաններով, պաշտոնական դաշինքներից խուսափելը կարող է իրականում ավելի շահավետ լինել: Այն մեծացնում է եվրասիական տերությունների մանևրելու հնարավորությունը և սահմանափակում լարվածության հավանականությունը: Այն նաև մրցակցության տարածություն է թողնում, սակայն քանի որ ԱՄՆ-ը կշարունակի լինել հզոր խաղացող, որը մտադիր է սահմանափակել Չինաստանի և Ռուսաստանի հզորությունը, այս երկու տերությունների ընդհանուր շահերը առաջնահերթություն կստանան հնարավոր անհամաձայնությունների նկատմամբ:

Հիերարխիկ աշխարհակարգը նաև էապես մոտ է չինական և ռուսական պատմական տեսլականներին՝ որպես քաղաքակրթական պետություններ, որոնց պնդմամբ՝ դրանք ներկայացնում են ոչ թե որոշակի տարածք, այլ կոնկրետ քաղաքակրթություն, որն արտացոլում է իր ուրույն ինստիտուտներն ու աշխարհաքաղաքական նկրտումները: Եվրասիական այս երկու տերությունների համար հիերարխիկ աշխարհակարգը կլինի երկար սպասված ուղղում, վերադարձ սովորական իրավիճակին՝ Արևմուտքի կողմից մոտ երկդարյա գերիշխանությունից հետո, սկսած այն ժամանակներից, երբ Եվրասիան

գերիշխող էր տնտեսապես, ուժերի հավասարակշռությունը գերակայում էր միջազգային հարաբերություններում, իսկ, այսպես կոչված՝ Վեստֆալյան սկզբունքները երկկողմ հարաբերությունների հիմնական տարրերն էին:[4] Այլ կերպ ասած՝ Պեկինը և Մոսկվան Արևմուտքում առկա անախորժությունները և Ասիայի վերելքը դիտարկում են որպես վերադարձ նորմալ պատմական իրավիճակին:

Որպես հիմնականում ցամաքային տերություններ, ակնկալվում է, որ Ռուսաստանը և Չինաստանը ավելի հաջողակ կլինեն Եվրասիայի սրտում: Այն տարածքը, որտեղ արևմտյան ազդեցությունը պատմականորեն մարգինալ է եղել և հեռու է հիմնական ծովային երթուղիներից, շատ ավելի ենթակա է նոր աշխարհակարգին: Բազմաթիվ օրինակներ, ինչպիսիք են Սև ծովում, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում շարունակվող փոփոխությունները, ցույց են տալիս, թե ինչպես է այս ձևավորվող կարգը գործում:

Իհարկե, կան նաև զգալի սահմանափակումներ, առ այն, թե ինչի կարող են հասնել Չինաստանն ու Ռուսաստանը: Հավաքական Արևմուտքը կմնա հզոր խաղացող, թեպետ եվրասիական ցամաքի խորքերում ներգրավվելու նշանակալիորեն նվազ պատրաստակամությամբ: Պեկինի և Մոսկվայի միջև երբեմն ծագող տարաձայնությունները, ինչպես նաև Հնդկաստանի և ասիական այլ տերությունների դիմադրությունը, կարող են նվազեցնել հաջող հիերարխիկ աշխարհակարգի հեռանկարները: Եվրասիայում, Հնդկական և խաղաղօվկիանոսյան տիրույթում դաշնակիցների և գործընկերների վրա ապավինելու՝ ԱՄՆ-ի՝ գնալով ակնհայտ դարձող քաղաքականությունը նույնպես կլինի հիերարխիկ աշխարհակարգի հիմնական խոչընդոտը:

Հարմարավետ գործընկերությունից այն կողմ

Չինաստանի և Ռուսաստանի միջև զարգացող ռազմական և տնտեսական հարաբերությունները կարելի է դիտարկել այլ տեսանկյունից: Նրանց միջև հարաբերությունները որպես հարմարավետության

4 Ikenberry, G. J., Etzioni, A. (2011). "Point of Order: Is China More Westphalian Than the West?", pp. 172–76. *Foreign Affairs*. 90(6) http://www.jstor.org/stable/23039640; Panda, A. (2014). China's Westphalian Attachment. *The Diplomat*. https://thediplomat.com/2014/05/chinas-westphalian-attachment/

գործընկերություն բնութագրելու փոխարեն պետք է նշել, որ նրանց կապերն իրականում արմատավորված են Արևմուտքի հետ ընդհանուր թշնամանքի՝ շատ ավելի երկար պատմական գործընթացում: Ռուսաստանի զարգացող աշխարհաքաղաքական դիրքը կարևոր է այստեղ, քանի որ նրա դերը Չինաստան-ԱՄՆ ընդլայնվող մրցակցության մեջ որոշակիորեն անտեսվել է գիտական գրականության մեջ: Ինչպե՞ս կվարվի Ռուսաստանը, կամ ի՞նչ են մտածում ռուսական քաղաքական էլիտաներն ու վերլուծական հանրությունը երկրի դիրքի փոփոխության մասին փոփոխվող գլոբալ ուժային հավասարակշռության մեջ: Սրանք հարցեր են, որոնք հիմնականում մնում են անպատասխան: Իմանալ, թե ինչ է ուզում Ռուսաստանը, և ինչպես է նա մտադիր վարվել, կնշանակի ունենալ կարևոր պատասխաններ առ այն, թե ինչպես կծավալվի Չինաստան-ԱՄՆ մրցակցությունը Եվրասիայում և, ի վերջո, լույս սփռել մութ կողմերի վրա՝ ձևավորվող նոր գլոբալ աշխարհակարգը հասկանալու համար: Այստեղ կպնդենք, որ Չինաստանի հետ Ռուսաստանի աճող ռազմավարական կապերը ավելի քիչ պայմանավորված են Արևմուտքի հետ նրա մրցակցությամբ և ավելի շատ հիմնված են ռուսական քաղաքական մտքի պատմության վրա: Սա նաև նշանակում է, որ Չինաստանի հետ գործընկերությունն ավելի երկարաժամկետ է, քան հաճախ ներկայացվում է:

Ի տարբերություն եվրասիական ցանկացած այլ տերության, Ռուսաստանի դիրքորոշումը ավելին է, քան ԱՄՆ-Չինաստան մրցակցության վրա որևէ այլ խաղացողի ազդեցությունը: Ռուսական քաղաքական վերնախավը ԱՄՆ-ի և Չինաստանի նոր սկսվող առճակատումը տեսնում է որպես երկրի թուլացող աշխարհաքաղաքական դիրքի ուժեղացման օպտիմալ հնարավորություն այն տարածաշրջանում, որը նախկինում խորհրդային տարածքն էր: Մոսկվան կարծում է, որ և՛ Վաշինգտոնը, և՛ Պեկինը խիստ կարիք կունենան ռուսական աջակցության, և այս տրամաբանությունը կհանգեցնի Կրեմլի կողմից, ցանկալի է, ոչ հանձնառու մոտեցման՝ ԱՄՆ-ի և Չինաստանի նկատմամբ: Իրականում Ռուսաստանը կցանկանար լինել այնպիսի իրավիճակում, երբ ԱՄՆ-ը և Չինաստանը ուժեղ մրցակցություն կծավալեին միմյանց հետ՝ շահելու Ռուսաստանի բարեհաճությունը: Այս մտածողությունը հիմնվում է այն բանի վրա, թե ինչից է վախենում Արևմուտքը, եթե հանկարծ Ռուսաստանը դառնա բացառապես չինամետ, և ինչից է վախենում Պեկինը, եթե Ռուսաստանը հրապուրվի արևմտյան ճամբարով:

Այս մտածողությունը հիմնված է նաև այն բանի վրա, թե ինչ է իրականում Ռուսաստանը մտածում հետլիբերալ աշխարհակարգի մասին. ակնկալվում է, որ բազմաբևեռ համակարգը թույլ կտա Ռուսաստանին խուսափել Չինաստանի կամ Արևմուտքի վրա կենտրոնանալուց:

Կողմերից մեկի օգտին ընտրություն կատարելը նույնպես միշտ հնարավոր է, սակայն արտաքին քաղաքականության նման արմատական փոփոխությունը պետք է ուղեկցվի նշանակալի օգուտներով: Չինաստանի հետ համագործակցելով՝ Ռուսաստանը ակնկալում է հետագայում իր ազդեցությունն ամրապնդել Կենտրոնական Ասիայում, որտեղ Պեկինի տնտեսական և անվտանգային շահերը երկրաչափորեն աճել են Խորհրդային Միության փլուզումից հետո: Թեև ռուսները ձեռնպահ են մնացել իրենց մտահոգությունները պաշտոնապես բարձրաձայնելուց, սակայն դա չի ժխտում այն փաստը, որ նման վերաբերմունք առկա է ռուսական քաղաքական վերնախավում: Չինաստանը, սակայն, չի կարողանա օգնել Ռուսաստանին ուժեղացնել իր թուլացող դիրքերը Ուկրաինայում: Նույնիսկ Հարավային Կովկասում, որտեղ Ռուսաստանի աճող կախվածությունը ռազմական բաղադրիչներից արտաքին քաղաքականության ձևավորման ժամանակ վտանգում է նրա հեղինակությունը և հարցականի տակ է դնում երկարաժամկետ խաղաղությունը տարածաշրջանում, Չինաստանը շատ քիչ օգտակար կլինի: Պեկինի հետ աշխատելու հարմարավետությունը նրա անտարբերությունն է այլ երկրների ներքին գործերին միջամտելուն: Չինաստանը նաև դեմ է պաշտոնական դաշինքներ ստեղծելուն: Պեկինի կարծիքով՝ պաշտոնական դաշինքները ավելի շուտ խոչընդոտում են երկրների մանևրելու կարողությանը: Սա մոտ է պետական ինքնիշխանության բարձրացման և աշխարհաքաղաքական տարբեր բևեռների միջև հավասարակշռության մասին Ռուսաստանի գաղափարներին՝ առանց կոնկրետ դաշինքային խոստումների:

Ռուսաստանն ավելի ու ավելի է ապավինում Չինաստանին 2014 թվականից սկսած, երբ Մոսկվայի կապերը հավաքական Արևմուտքի հետ իջան սառը պատերազմի ավարտից հետո ամենացածր մակարդակին:[5] Սա շատերին ստիպեց ենթադրել, որ Ռուսաստանը

5 Gabuev. A. (2021). As Russia and China Draw Closer, Europe Watches With Foreboding. *Carnegie Moscow Center.* https://carnegiemoscow.org/commentary/84135

կարող է վերածվել Չինաստանի կցորդի: Ինչպես կփաստարկենք ստորև, այստեղ ավելի նուրբ զարգացում կարող է լինել:

Թե որքան հիմնարար կլինի Ռուսաստանի ասիական շրջադարձը, կախված է Չինաստանի փոփոխվող արտաքին քաղաքականությունից և հավաքական Արևմուտքի քաղաքականությունից: Շատերի համար պարզապես կարճատև զարգացում համարվող այս փոփոխությունը՝ Ռուսաստանի մերձեցումն Ասիային (ներառյալ Մերձավոր Արևելքը) շատ ավելին է, քան պարզապես Արևմուտքից հիասթափվածության կամ բանակցային ուժեղ դիրք կառուցելու փորձ: Գործընթացը ավելի շուտ արմատացած է ռուսական պատմական ավանդույթների խորքում. սա փնտրտուք է մի բանի, ինչը ես անվանում եմ արտաքին քաղաքականության «ապաարևմտականացում», երբ ավարտվում է կենտրոնացումն Արևմուտքի վրա, և փոխարենը վարվում է բազմաբևեռ արտաքին քաղաքականություն՝ «Գլոբալ Ռուսաստանի» քաղաքականությամբ, որը հավասարապես ուղղված է երկրագնդի բոլոր այն տարածաշրջաններին, որոնք ավելի մեծ հնարավորություն են տալիս հավասարակշռության և մանևրելու համար: Այս դժգոհությունը և Ռուսաստանի արտաքին քաղաքականության «ապաարևմտականացման» տարբեր փորձերը ձգվում են մինչև անցյալ դարեր, ինչը ցույց է տալիս, թե որքան բնական է եղել արտաքին քաղաքականության այլընտրանքների որոնումը Ռուսաստանի համար: Երբ Պետրոս Առաջինը բարեփոխեց Ռուսաստանը և մեծապես եվրոպականացրեց իշխող վերնախավը տասնյոթերորդ դարի վերջին և տասնութերորդ դարի սկզբին, այն ժամանակվանից շատերը գովաբանեցին նրան, բայց կային նաև այնպիսիք, ովքեր խորապես հիասթափված էին: Նրանք կարծում էին, որ Պետրոսը կոտրեց կամուրջը սովորական ժողովրդի և ռուսական քաղաքական էլիտայի միջև: Շատերը նաև կարծում էին, որ երկրի եվրակենտրոնությունը իրականում սահմանափակեց Ռուսաստանի՝ որպես իրական գլոբալ ուժ դիրքավորվելու կարողությունը: Նույնը փորձեցին անել Ռոմանովները, մասնավորապես՝ 1853-1856 թվականների Ղրիմի պատերազմից հետո: Խորհրդային Միությունը նույնպես, աշխարհի նկատմամբ ունեցած բոլոր յուրօրինակ մոտեցումներով, հետևում էր հավասարակշռման խաղին: Երկու փորձերն էլ ձախողվեցին ռեսուրսների և ուժեղ ասիական գործընկերների բացակայության պատճառով, որոնց վրա կարող էին հույս դնել: Ի տարբերություն սրա՝ Չինաս-

տանի հզորությունն այսօր պատմական հնարավորություն է տալիս Մոսկվային: Այստեղից գալիս են Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի «ապաարևմտականացման» փորձերը, որոնք պետք է դիտարկել որպես ռուսական քաղաքական մտքի՝ վերը քննարկված մեծ պատմական շրջանի կրկնություն:

Բոլորը մատնացույց են անում մի հստակ ուրվագծվող միտում, որը պնդում է, որ Ռուսաստանի հեռանալը Եվրոպայից ժամանակավոր գործ չէ, և Չինաստան-Ռուսաստան գործընկերության խզումը, ինչպես այն եղավ 1970-ականներին, դժվար թե տեղի ունենա:[6] Նույնիսկ եթե Արևմուտքը շարժվի Ուկրաինայի և Ռուսաստանի հարևան այլ պետությունների մասով մեծ աշխարհաքաղաքական գործարք կնքելու ուղղությամբ, Մոսկվայի՝ իր արտաքին քաղաքականության «ապաարևմտականացման» իրականացումը հավանաբար կշարունակվի: Թեև այն հաճախ դիտարկվում է որպես համեմատաբար ավելի ուշ երևույթ, որն առաջացել է 2010-ականներին Պուտինի օրոք և Արևմուտքի հետ Ուկրաինայի հարցով բախման հետևանքով, բաժանման ներկայիս միտումն առկա է առնվազն 1990-ականներից, երբ դժգոհության նշաններ երևացին Արևմուտքի միաբևեռ դիրքի նկատմամբ, ինչը լավ արտացոլված է 1997 թվականին ՄԱԿ-ում ներկայացված «Բազմաբևեռ աշխարհի և նոր միջազգային աշխարհակարգի ստեղծման մասին ռուս-չինական համատեղ հռչակագրում»:[7] Սա խոսում է այն մասին, որ նույնիսկ առանց Ուկրաինայի և Ղրիմի անեքսիայի, որոնք խզում են առաջացրել Արևմուտքի հետ, Ռուսաստանը նորից, ամենայն հավանականությամբ, հետամուտ էր լինելու Եվրոպայից հեռանալու և հավասարակշռելու քաղաքականությանը, սակայն ավելի քիչ տրավմատիկ ճանապարհով:

Սա նաև նշանակում է, որ Ռուսաստան-Չինաստան համագործակցությունը բացատրելիս մենք պետք է նայենք «հարմարավետ գործընկերության» հեռանկարից անդին: Աճող համագործակցությունը և

6 Radchenko, S. (2021). *Driving a Wedge Between China and Russia Won't Work. War on the Rocks.* https://warontherocks.com/2021/08/driving-a-wedge-between-china-and-russia-wont-work/

7 "Russian-Chinese Joint Declaration on a Multipolar World and the Establishment of a New International Order". (1997). http://www.lawinfochina.com/display aspx?id=7131&lib=tax&SearchKeyword=&SearchCKeyword=

ընդհանուր առմամբ Ռուսաստանի ասիական շրջադարձը ընդամենը աշխարհակարգի մասին ռուսական փոփոխվող ընկալման երկու փոխկապակցված մասեր են: Այս շրջադարձը անքակտելիորեն կապված է Արևմուտքի հետ կապը թոթափելու՝ Մոսկվայի փորձերի հետ:

Հաճախ անտեսվում է, որ Ռուսաստանի համար և՛ Չինաստանը, և՛ ԱՄՆ-ը գրեթե նույն տրամաչափի հավասարապես երկարաժամկետ աշխարհաքաղաքական մրցակիցներ են: Մոսկվայում վստահությունը երկու ուժերի նկատմամբ ցածր է: Ռուսաստանի ներքին աշխարհաքաղաքական աշխարհայացքը միտված է ԱՄՆ-Չինաստան մրցակցությունից ձեռնպահ մնալուն՝ իր աշխարհագրական և ռազմական դիրքի օգտագործմամբ ստիպելով ԱՄՆ-ին և Չինաստանին՝ դիմել Ռուսաստանին աշխարհաքաղաքական աջակցության համար: Որքան երկար տևի երկու տնտեսական և ռազմական տերությունների մրցակցությունը, այնքան այն ավելի ձեռնտու կլինի Մոսկվայի աշխարհաքաղաքական նպատակներին Հարավային Կովկասում, Ուկրաինայում և Մերձավոր Արևելքում: Մրցակցությունը կարող է նաև որոշակի ժամանակ տալ Ռուսաստանին՝ հաստատվելու որպես աշխարհաքաղաքական գրավիտացիայի առանձին բևեռ, թեկուզ շատ ավելի փոքր մասշտաբով:

Այսպիսով, հակառակ այն պնդմանը, որ Ռուսաստանը գնալով ավելի կկապվի Չինաստանի հետ և այդպիսով կկորցնի իր մանևրելու ունակությունը, իրականում կարող է լինել բոլորովին հակառակը: Երկու մեծ աշխարհաքաղաքական կենտրոնների՝ Չինաստանի և Արևմուտքի միջև ընկած Ռուսաստանը շատ ավելի ճկունություն կունենա նրանց միմյանց դեմ խաղացնելու համար: Նրա շրջադարձը դեպի Ասիա թելադրված էր ոչ միայն Ուկրաինայի հարցում Արևմուտքի հետ կապերի բարդացմամբ, այլև Ռուսաստանի արտաքին հայացքների «ապաարևմտականացման» երկարատև քաղաքականության շարունակությամբ: Արևմուտքի վրա աշխարհաքաղաքական սևեռումից ազատվելը կայսերական և խորհրդային ժամանակաշրջաններում ռուսական դիվանագիտության գերնպատակն էր: Արևմուտքին հզոր այլընտրանքներ կամ, ավելի ճիշտ, հավասարակշռողներ այն ժամանակ գոյություն չունեին: Չինաստանի վերելքով, սակայն, օրինաչափությունը փոխվեց: «Ապաարևմտականացման» հետապնդումը թափ է հավաքում, ինչը, Մոսկվայի տեսանկյունից, խոստումնալից

պայմաններ է ստեղծում Արևմուտքի հետ հարաբերությունները Չինաստանի հետ աճող գործընկերության հետ հավասարակշռելու համար:

Էմիլ Ավդալիանին *վրացական «Geocase» վերլուծական կենտրոնի (think-tank) «Մերձավոր Արևելքի հետազոտությունների» բաժնի տնօրենն է և Եվրոպական համալսարանի միջազգային հարաբերությունների պրոֆեսոր: Մագիստրոսի կոչումն ստացել է Օքսֆորդի համալսարանում, իսկ դոկտորական աստիճանը՝ Իվանե Ջավախիշվիլիի անվան Թբիլիսիի պետական համալսարանում (ԹՊՀ): Դոկտոր Ավդալիանին ներկայումս պատմություն և միջազգային հարաբերություններ է դասավանդում Եվրոպական համալսարանում և Իլիայի պետական համալսարանում: Նա հեղինակել է մի շարք գրքեր, այդ թվում՝ իր վերջին «Նոր աշխարհակարգը և փոքր տարածաշրջանները. Հարավային Կովկասի դեպքը» գիրքը, որը հրատարակվել է «Palgrave Macmillan»-ի կողմից: Դոկտոր Ավդալիանին մասնագիտացած է Հարավային Կովկասի և Եվրասիայի ժամանակակից քաղաքական և ռազմական խնդիրների մեջ՝ հատուկ ուշադրություն դարձնելով Իրանի, Թուրքիայի և Չինաստանի վրա: Դոկտոր Ավդալիանին աշխատել է տարբեր միջազգային խորհրդատվական ընկերություններում՝ որպես Ռուսաստանի և նրա հարևանների տարածաշրջանային հարցերով վերլուծաբան: Նա պարբերաբար աշխատություններ է հրապարակում CEPA-ում, RUSI-ում, Caucasuswatch.de-ում, Georgia Today-ում և այլ հարթակներում, խոսում և գրում է անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, պարսկերեն, չինարեն և քուրմանջի [քրդերեն] լեզուներով:*

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ, ԹԵ՞ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ: ԻՆՉԻ՞Ն ՍՊԱՍԵԼ

ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՎՐԱ

Զուրաբ Մենագարիշվիլի

Ներածություն

Ռուսաստանի՝ չսադրված ներխուժումն Ուկրաինա և դրան հաջորդած իրավիճակը մարտի դաշտում էականորեն ազդեցին ոչ միայն Ուկրաինայի և Ռուսաստանի, այլև ողջ աշխարհի, այդ թվում՝ Հարավային Կովկասի անվտանգության վրա: Հետևաբար, այս պատերազմն իր ազդեցությունն ունեցավ Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի պես փոքր պետությունների արտաքին և ներքին քաղաքականության վրա:

Աշխարհաքաղաքական նոր իրողությունը նոր մարտահրավերներ, սպառնալիքներ ու հնարավորություններ է ստեղծել Հարավային Կովկասի համար՝ որպես միասնական տարածաշրջանի, այնտեղ ընդգրկված յուրաքանչյուր պետության համար:

Սույն հոդվածում ես կքննարկեմ ակնկալվող նոր հնարավորությունները, ռիսկերը և մարտահրավերները, ինչպես նաև այն, թե ինչ է փոխել պատերազմը Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի համար:

Սակայն մինչ դա անելը, որպեսզի հասկանանք, թե ինչպես է պատերազմն ազդում տարածաշրջանի վրա, ճիշտ կլինի քննարկել, թե ինչ է կատարվում հենց բուն պատերազմում:

Գերզբաղված պատերազմով

Ուկրաինայում պատերազմից յոթ ամիս է անցել, սակայն Ռուսաստանը դեռ չի հասել իր առաջնային նպատակին: Դեռևս պարզ չէ, թե հակամարտությունը երբ կարող է ավարտվել:

Հակամարտությունը դիտարկելիս կարելի է ասել, որ Ռուսաստանը մի քանի խոշոր պարտություններ է կրել Ուկրաինայում.

Առաջին և ամենագլխավոր պարտությունն այն է, որ նա չկարողացավ հասնել պատերազմի սկզբում դրված նպատակին, ինչը նախատեսում էր իշխանափոխություն Ուկրաինայում և երկրի վերադարձ ռուսական ազդեցության գոտի:

Այս նպատակի չիրականացման ամենավառ դրսևորումը ռուսական զորքերի դուրսբերումն էր Կիևի, Սումիի և Չեռնիգովի շրջաններից, ինչպես նաև պատերազմի երկրորդ փուլի մեկնարկը, որի նպատակը համեմատաբար համեստ էր՝ ուշադրությունը տեղափոխել Դոնբաս:

Հարկ է նշել, որ Ուկրաինայի և Ռուսաստանի միջև սկսված պատերազմը երկու հարևանների միջև տարածքային վեճ չէ, որտեղ նույնիսկ մի փոքրիկ գյուղի գրավումը կողմերից որևէ մեկի կողմից մեծ հաջողություն կդիտվեր: Ինչպես վերը նշվեց, սա պատերազմ է, որի հիմնական նպատակը, ըստ երևույթին, հարևան երկրի կառավարության տապալումն էր և, հետևաբար, աշխարհաքաղաքական փոփոխության իրականացումը մինչդեռ Ռուսաստանը չկարողացավ հասնել դրան:

Թեև Մոսկվան անզոր էր իրականացնելու նախապես դրված նպատակը և հաղթանակած հեռանալ մարտի դաշտից, այնուամենայնիվ, հնարավոր էր շահեկան ելք ստանալ պատերազմից: Այն կարող էր Ուկրաինան վերածել անկայուն, ձախողված, քաոսային երկրի, բայց նույնիսկ սա Մոսկվային չհաջողվեց՝ Ուկրաինային ցուցաբերվող արևմտյան օգնության շնորհիվ : Սա Ռուսաստանի երկրորդ ձախողումն էր Ուկրաինայում:

Երրորդ և ամենատեսանելի ձախողումներից մեկը կարելի է համարել հակահարձակումը Խարկովի մարզում, որտեղ Ռուսաստանը պարտություն կրեց ոչ միայն քաղաքական իմաստով, այլև մարտի դաշտում: Նմանատիպ, սակայն համեմատաբար համեստ իրադարձություն էր Զմեյնի կղզու կորուստը: Արդյունքում, Զմեյնի և Խարկովի մարզի կորստով է՛լ ավելի պարզ դարձավ, որ պատերազմը չի ընթանում այնպես, ինչպես ցանկանում էր Ռուսաստանը:

Հաշվի առնելով այս ամենը՝ Ուկրաինայում ստեղծված իրավիճակը Կրեմլից ավելի մեծ ուշադրություն է պահանջում, որի տրամաբանական դրսևորումը ողջ Ռուսաստանում մասնակի մոբիլիզացիայի հայտարարությունն էր: Սա նշանակում է, որ Ուկրաինան, որը մինչ այժմ թիվ մեկ հարցն էր, է՛լ ավելի վճռորոշ խնդիր է դառնում Մոսկվայի համար:

Իր ջանքերի և ուշադրության մեծ մասն ուկրաինական պատերազմի վրա սևեռելը և այս հակամարտությունում դրված նպատակներին չհասնելը Ռուսաստանի ազդեցությունը թուլացնում է այլ տարածաշրջաններում, այդ թվում՝ Կովկասում և Կենտրոնական Ասիայում: Այս ամենը հետագայում որոշակի տարածք է ընձեռում տեղական կամ տարածաշրջանային կողմերին՝ Կրեմլից անկախ գործելու համար:

Ազդեցությունը տարածաշրջանի վրա

Ունեցած ողջ ռեսուրսներն Ուկրաինայի վրա ուղղելու և պատերազմում ամբողջությամբ ներգրավվելու արդյունքում Ռուսաստանի ուշադրությունը շեղվել է Հարավային Կովկասից: Ռուսաստանը չի կարողանում ամենուր ներկա և հավասարապես արդյունավետ լինել:

Ադրբեջանի և Հայաստանի միջև ընթացիկ էսկալացիան՝ սեպտեմբերի 12-14-ին Հայաստանի տարածքների վրա Ադրբեջանի հարձակումը, որը նախկինում երբեք նման մասշտաբով չէր գրանցվել, Ռուսաստանի շեղված ուշադրության և զբաղվածության վառ օրինակ է:

Թեև Բաքուն հերքում է հարձակման վերաբերյալ հայկական մեղադրանքները, սակայն ակնհայտ է, որ սա ղարաբաղյան երկրորդ պատերազմից ի վեր ամենամասշտաբային ու դաժան էսկալացիան էր՝ զոհերի քանակով և աշխարհաքաղաքական հետևանքներով:

Այն բանից հետո, երբ Հայաստանը դա անվանեց հարձակում Ադրբեջանի կողմից, Երևանը օգնության խնդրանքով դիմեց և՛ Ռուսաստանին, և՛ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը (ՀԱՊԿ) (ՏԱՍՍ, 2022 թ.), սակայն նրանք ակտիվ կերպով չարձագանքեցին: Փոխարենը՝ Ռուսաստանը Հայաստանին կոչ արեց լուծել «բոլոր վիճելի հարցերը դիվանագիտական և քաղաքական ճանապարհներով» (Ռուսաստանի արտաքին գործերի նախարարություն, 2022 թ.):

Ռուսաստանը նախկինում նույնպես ակտիվորեն չէր պաշտպանում հայկական շահերը, ինչը կարող էր դիտվել որպես Հայաստանի նոր իշխանությանը, ավելի կոնկրետ՝ (վարչապետ) Փաշինյանին պատժելու ձև, որն ընդդիմանում էր իշխելու ռուսական ոճին: Սակայն Ռուսաստանը թույլ չտվեց Ադրբեջանին հատել «կարմիր գծերը», ինչը

պայմանավորված էր Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության անձեռնմխելիությամբ, ինչպես նաև մարտերը դադարեցնելու պատրաստակամությամբ, ինչն ի հայտ եկավ, երբ 2020 թվականի պատերազմում Ադրբեջանի գերազանցությունն ակնհայտ դարձավ:

Սակայն հիմա, երբ Ռուսաստանը գերզբաղված է՝ Հարավային Կովկասին բավարար ուշադրություն դարձնելու համար, ավելի ակնհայտ է դառնում, որ Ռուսաստանն ի վիճակի չէ ապահովել Հայաստանի անվտանգությունը:

Տարածաշրջանում Ռուսաստանի կողմից ուշադրության թուլացումը, որը մինչ այժմ համարվում էր կողմերի միջև միջնորդ, ինչպես նաև Հայաստանի դաշնակիցը, ուղերձ է Բաքվին՝ հնարավոր էսկալացիաների դեպքում, երբ սովորաբար դժվար է որոշել, թե ով է առաջինը կրակել, առավելագույնս օգտագործել իր ռազմական առավելությունը՝ հակառակորդի վրա ճնշում գործադրելու համար: Ծայրահեղ էսկալացիայի և սահմանային վեճերի դեպքում սա կարող է նշանակել նաև կոլեկտիվ պայմանագրի կազմակերպության անդամ Հայաստանի տարածքի թիրախավորում:

Մյուս կողմից՝ Հայաստանի բնակչության և իշխանության համար ավելի պարզ է դառնում, որ իրենց անվտանգությունը երաշխավորելու համար հույսը չպետք է դնել միայն Ռուսաստանի վրա, երբ այժմ նա ունի ավելի լուրջ խնդիրներ, քան Հարավային Կովկասն է: Երկրին անհրաժեշտ է նոր գլոբալ ուժ, որը կկատարի արդար միջնորդի դեր Ադրբեջանի հետ բանակցություններում: Սա կարող է լինել «կոլեկտիվ Արևմուտքը», ԱՄՆ-ը կամ ԵՄ-ն, որը բանակցությունների ընթացքում կմնա անաչառ: Արևմուտքի հզորացումը պետք է որ բխի Ադրբեջանի շահերից, եթե այն հակամարտության ընթացքում լինի համեմատաբար չեզոք միջնորդ:

Այս փուլում տեսականորեն, երբ Ռուսաստանը Կովկասի համար ժամանակ չունի, Վրաստանի համար բացվում է հնարավորությունների պատուհան՝ ընդհանուր լեզու գտնելու աբխազների և օսերի հետ, թեպետ այն փաստը, որ աբխազները, օսերն ու վրացիները կռվում են պատերազմի տարբեր ճամբարներում, բարդացնում է ժողովուրդների միջև հնարավոր երկխոսությունը:

Ինչպես վերը նշվեց՝ բացի տարածաշրջանի վրա ունեցած ազդեցություններից, որոնք ընդգծվեցին Ռուսաստանի թուլացման և տեղական դերակատարների ակտիվացման տեսքով, Ռուսաստանի նախաձեռնած պատերազմն ազդեց յուրաքանչյուր երկրի անվտանգության, ինչպես նաև ներքին և արտաքին քաղաքականության վրա:

Պատերազմի շնորհիվ Ադրբեջանը կարողացավ Եվրամիության հետ ստորագրել գազի մատակարարման նոր պայմանագիր (Aljazeera, 2022 թ.), ինչը, բնականաբար, նշանակում է երկրի եկամուտների ավելացում: Դրանից կշահի նաև Վրաստանը, քանի որ նրա տարածքով են անցնում Եվրոպային միացող խողովակաշարերը:

Վերջին սրացումների և Ադրբեջանի հետ ղարաբաղյան երկրորդ պատերազմի ֆոնին հայաստանյան ընդդիմադիր խմբավորումների շրջանում ուժեղացել են ռուսամետ տրամադրությունները (IRI, 2022 թ.), ինչը նշանակում է հզոր ընդդիմություն Փաշինյանի կառավարության դեմ, քանի որ ընդդիմադիր ընտրազանգվածի շրջանում նա չի համարվում Ռուսաստանի դաշնակիցը:

Պատերազմի մեկնարկից անմիջապես հետո հարյուր հազարավոր ռուս և բելառուս միգրանտներ ուղևորվեցին դեպի Վրաստան (IDFI, 2022 թ.) և Հայաստան (Ամերիկայի ձայն, 2022 թ.): Արդյունքում՝ մեծացավ անշարժ գույքի նկատմամբ պահանջարկը, իսկ մեծ քաղաքներում բնակարանների գները կտրուկ բարձրացան: Դա զգալի խնդիրներ է ստեղծել տեղի բնակչության համար (Netgazeti, 2022 թ.), քանի որ նրանց ամսական եկամուտը շատ ավելի ցածր է, քան ռուս միգրանտներինը:

Այսպիսով՝ մենք բախվում ենք նոր բնակարանային ճգնաժամի, որին կառավարությունները պետք է պատշաճ արձագանքեն:

Վրաստանը մեծ թվով բեռներ է ստացել արևելք-արևմուտք կապող միջանցքից, ինչը դրականորեն է ազդում երկրի եկամուտների վրա, սակայն դրանք նաև ցույց են տալիս, որ երկրի ճանապարհային ենթակառուցվածքները արդիականացման կարիք ունեն:

Հարկ է նշել նաև, որ ուկրաինական պատերազմի սկսվելուց հետո հնարավոր եղավ Վրաստանին շնորհել ԵՄ պոտենցիալ թեկնածու պետության կարգավիճակ, չնայած այն բանին, որ Վրաստանի հետ միասին այդ գործընթացին ներգրավված Ուկրաինան և Մոլդովան կարողացան ստանալ նաև թեկնածու երկրների կարգավիճակ:

Վերջաբանի փոխարեն

Պատերազմն Ուկրաինայում, թվում է՝ դեռ երկար է շարունակվելու, և Ռուսաստանի համար հեշտ չի լինի միանշանակ հաղթանակ տանելը: Հետևաբար, Կովկասն անհայտ ժամանակով զրկված է լինելու Ռուսաստանի ուշադրությունից:

Կրկնեմ՝ սա չի նշանակում, որ Ռուսաստանն ամբողջությամբ կլքի տարածաշրջանը, սակայն տեղի պետությունները, հատկապես՝ ռուսական ագրեսիայի վտանգի տակ գտնվողները, պետք է պատրաստվեն Ռուսաստանի՝ ավելի զորեղ վերադարձին տարածաշրջան, որպեսզի նորից ստիպված չլինեն Կրեմլի հետ հարաբերությունները կառավարել գաղութատիրական տեսանկյունից:

Այս պատճառով կենսական նշանակություն ունի հզոր դաշնակիցներ գտնելը: Ըստ իս՝ դա պետք է լինի հավաքական Արևմուտքը:

Չնայած նրան, որ ակնհայտորեն բարդ է շահագրգռել Արևմուտքին, ավելի ճիշտ՝ «ստիպել» նրան հավասարակշռել Ռուսաստանին տարածաշրջանում, կովկասյան պետությունները, հատկապես՝ Վրաստանը, պետք է շարունակեն ավելի շատ ուժ գտնելու փորձերը՝ հավասարակշռելու ռուսական կամ այլ ազդեցությունները:

Սրան կարելի է հասնել խաղաղության միջոցով, իսկ Վրաստանի դեպքում՝ միաժամանակ աջակցելով ժողովրդավարական բարեփոխումներին և հիշեցնելով Արևմուտքին, որ Վրաստանը և, հետևաբար նաև տարածաշրջանը, բախվում են այն նույն սպառնալիքներին, որոնք այժմ առկա են Ուկրաինայում:

Հղումներ

Aljazeera. (2022, Jul 13). *EU signs deal with Azerbaijan to double gas imports by 2027*. Aljazeera.com. https://www.aljazeera.com/news/2022/7/18/eu-signs-deal-with-azerbaijan-to-double-gas-imports-by-2027

IDFI. (2022, Sep 7). **ტურიზმი თუ მიგრაცია? (რუსეთის მოქალაქეების საქართველოში დარჩენის მაჩვენებელი** - *2022* **მარტი-ივნისი)**. IDFI.ge. https://idfi.ge/ge/tourism_or_migration_rate_of_stay_of_russian_citizens_in_georgia

IRI. (2022, Sep 9). *Public Opinion Survey: Residents of Armenia | June 2022*. iri.org. https://www.iri.org/resources/public-opinion-survey-residents-of-armenia-june-2022/

Ministry of Foreign Affairs of Russia. (2022, Sep 13). *Заявление МИД России в связи с эскалацией напряженности между Азербайджаном и Арменией*. Mid.ru. https://mid.ru/ru/press_service/spokesman/official_statement/1829629/

Netgazeti. (2022, Sep 15). **რა ეშველებათ სტუდენტებს — სწავლა იწყება, ბინები კი კვლავ ძვირია.** Netgazeti.ge. https://netgazeti.ge/life/627826/

TASS. (2022, Sep 13). *Armenia has already appealed to Russia, CSTO, UN in connection with clashes on the border*. TASS.com. https://tass.com/world/1506567

Voice of America. (2022, Apr 7). *Thousands of Russians Move to Armenia Amid Russia's Aggression in Ukraine. voanews.com*. https://www.voanews.com/a/thousands-of-russians-move-to-armenia-amid-russia-aggression-in-ukraine/6519184.html

Զուրաբ Մենագարիշվիլին *աշխատում է վրացական «Նեթգազեթի» լրատվամիջոցում և հիմնականում լուսաբանում է հարավկովկասյան խնդիրները: Նա միջազգային հարաբերությունների մագիստրոսի կոչում ստացել է Իլիայի պետական համալսարանում, նաև ունի քաղաքագիտության բակալավրի կոչում Թբիլիսիի պետական համալսարանից: Ուսման ընթացքում մեկ կիսամյակ անցկացրել է Ավստրիայի*

Հալցբուրգ քաղաքում: Պարբերաբար հոդվածներ է հրապարակում Հարավային Կովկասում համագործակցության, հակամարտությունների ու մարտահրավերների մասին: Պարոն Մենագարիշվիլին իր հայ գործընկերների հետ հաճախ է մասնակցում միջսահմանային համագործակցության նախագծերին:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՊՈՏԵՆՑԻԱԼ ԴԵՐԸ ԸՆԹԱՑԻԿ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հայկ Թորոյան

Աշխարհում ներկայումս ընթացող աշխարհաքաղաքական փոփոխությունները, մասնավորապես՝ Ուկրաինայի պատերազմը, Լեռնային Ղարաբաղի վերջին պատերազմը և էներգետիկ ճգնաժամը Եվրամիությունում, ձևավորում են նոր իրականություն, որտեղ երկրների և տարածաշրջանների դերերը կարող են կտրուկ փոխվել: Սույն հոդվածը ավելի խորը կանդրադառնա այս փոփոխություններում Հարավային Կովկասի տարածաշրջանի դերին և ներկայիս քաղաքական մթնոլորտին: Առաջին հերթին՝ հոդվածը կուսումնասիրի նոր իրականության հնարավորությունները ու մարտահրավերները կովկասյան երեք երկրների համար, ինչպես նաև հնարավոր զարգացումները, որոնք կարող են ընդմիշտ փոխել տարածաշրջանը: Հոդվածի կենտրոնական թեման կլինի հաղորդակցության ցանցերի հավանական բացման դիտարկումը, ավելի ճիշտ՝ Արևելք-Արևմուտք հնարավոր միջանցքը, որը կմիացնի Չինաստանը Եվրոպային, ինչպես նաև Հարավ-Հյուսիս միջանցքը, որը կմիացնի Հնդկաստանը Եվրոպային: Երկու նախագծերն էլ կարող են անցնել Հարավային Կովկասով և ազդեցություն կունենան երկրների քաղաքականության և առկա հակամարտությունների վրա:

Հարավային Կովկասը մի տարածաշրջան է, որն իր բնակիչների կողմից դիտվում է որպես աշխարհի կենտրոն, իսկ օտարների կողմից՝ ոչ մի տեղի սահմանագիծ: Սա մեջբերում է ընկերներիցս մեկի կողմից վերջերս հրապարակված հոդվածից:

Սովորաբար՝ ես կհամաձայնեի նրա հետ և կծաղրեի իմ հայրենիքի չափազանց ուռճացված տեսակետը: Սակայն վերջին աշխարհաքաղաքական իրադարձությունները՝ ուկրաինական պատերազմը և պատերազմը Լեռնային Ղարաբաղում, արմատապես փոխեցին աշխարհաքաղաքական իրավիճակը: Այս հոդվածում ես կպնդեմ, որ վերը նշված պատերազմները, Ռուսաստան-Արևմուտք հակամարտությունը, չինական էքսպանսիան, ԵՄ էներգետիկ ճգնաժամը և այլ գործոններ կարող են ավելի մեծ դեր ստեղծել տարածաշրջանի հա-

մար: Հավանաբար՝ չափազանց բարձր ինքնագնահատման երկար պատմության մեջ ամենամեծ դերերից մեկը:

Ներկայիս աշխարհաքաղաքական փոփոխություններում Հարավային Կովկասի պոտենցիալ դերը հասկանալու համար պետք է նայել տարածաշրջանից դուրս: Սկսենք հայկական և վրացական այբուբենի պես հին նախագծերից՝ Մետաքսի ճանապարհից: Նախ «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» [One Belt One Road] վերանվանված այս ներդրումային պլանը, որն այժմ հայտնի է որպես Չինաստանի «Գոտի և ճանապարհ» [Belt and Road] նախագիծ, մի ճանապարհ է, կամ երևի պետք է ասել՝ ճանապարհներ, որոնք կոչված են միացնելու չինական շուկաները եվրոպական շուկաների հետ: Ըստ էության, նոր նախաձեռնությունը Մետաքսի ճանապարհի թարմացված և վերափոխված տարբերակն է: Նախաձեռնությունը, որը մշակել է Չինաստանը 2013 թվականին, նպատակ ունի կապել չինական շուկան Եվրասիայի ավելի քան 70 երկրների հետ: Նախաձեռնությունն առաջարկում է Չինաստանից սկզբնավորվող երեք հետագիծ.

1) **Հյուսիսային գոտին** [The North Belt] Կենտրոնական Ասիայի և Ռուսաստանի միջոցով կապվում է Եվրոպայի հետ:
2) **Կենտրոնական գոտին** [The Central Belt] անցնում է Կենտրոնական և Արևմտյան Ասիայով մինչև Պարսից ծոց և Միջերկրական ծով: Բացի այդ, նախատեսվում է Պակիստանով Հնդկական օվկիանոսին միացնող ճանապարհ:
3) **Հարավային գոտին** [The South Belt] անցնում է Հարավարևելյան Ասիայով՝ Հնդկական օվկիանոսը միացնելով աֆրիկյան մայրցամաքին և այնուհետև Սուեզի ջրանցքով Հունաստան դուրս գալով՝ Եվրոպային և անդին: Այս երթուղին ավելի ծովային է, մինչդեռ մյուսները անցնում են ավելի շատ ցամաքային շրջաններով և երկրներով:

Հիմնական շեշտը դրվեց հյուսիսային ուղու վրա, քանի որ այն անցնում էր ավելի քիչ թվով երկրներով և փոխկապակցված հարաբերություններ էր ստեղծում Ռուսաստանի և Չինաստանի միջև: Երթուղին նպաստեց երկու խոշոր տերությունների համագործակցության ծաղկմանը: Սակայն Ուկրաինայի պատերազմը կտրուկ փոխել է իրավիճակը: Ռուսաստան-Արևմուտք առճակատմամբ փակվել են

Ռուսաստանը Եվրոպային կապող հիմնական կապուղիները՝ ազդելով նաև «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության՝ հյուսիսային ճանապարհով չինական շուկաներից եկող փոխադրումների վրա: Թեպետ հաղորդակցության առումով Չինաստանի վրա ազդեցություն ունեցան Ուկրաինայում ռուսական գործողությունները՝ այն շատ բան շահեց նաև Ռուսաստանից: Մասնավորապես, Չինաստանը բնական գազ է գնում Ռուսաստանից 30% զեղչով և սննդի վերամշակման գործարաններ է հիմնում Ռուսաստանի Հեռավոր Արևելքում՝ մեղմելու հնարավոր սովը, որը կարող է լուրջ վտանգ դառնալ Ռուսաստանում ուկրաինական պատերազմի պատճառով:

Հյուսիսային գոտու հետ կապված բարդությունների դեպքում Հարավային գոտին նույնպես կարող է հսկայական խնդիր դառնալ Չինաստանի համար: Ծովային երթուղին անցնում է Մալաքայի նեղուցով՝ կարևորագույն ռազմավարական գոտի, որը գտնվում է Մալայզիայի, Սինգապուրի և Ինդոնեզիայի միջև: Մերձավոր Արևելքից և Աֆրիկայից Չինաստան տեղափոխվող հում նավթի 80 տոկոսը տեղափոխվում է այս նեղուցով: Բացի այդ, ըստ հաշվարկների՝ Չինաստանից արտահանման 36-44 տոկոսն անցնում է այս նեղ ջրային տարածքով: Պեկինը նեղուցը դիտարկում է թե՛ որպես կարևոր ռազմավարական վայր, թե՛ Չինաստանի «աքիլլեսյան գարշապար», քանի որ այս նեղ հատվածի շրջափակումը կհանգեցնի չինական տնտեսության ամբողջական փլուզմանը: Ուստի Չինաստանն ակտիվորեն փնտրում է այլընտրանքային առևտրային և էներգետիկ ուղիներ:

Հենց այստեղ է, որ օգնության է գալիս Կենտրոնական գոտին: Էներգետիկ ռեսուրսների զեղչերից խնայված հավելյալ գումարների շնորհիվ Չինաստանը սկսեց դիտարկել «Գոտի և ճանապարհ» կենտրոնական երթուղին որպես այլընտրանք՝ Ռուսաստանի գերիշխող ազդեցությանը ենթարկվող Հյուսիսային գոտու և իր՝ Աքիլեսյան գարշապար համարվող Հարավային գոտուն: Կենտրոնական գոտին պատշաճ կերպով չէր գործում, քանի որ ճանապարհին չափազանց շատ հակամարտություններ ու խոչընդոտներ կային: Ռուս-վրացական պատերազմը, Աֆղանստանում անվերջանալի ճգնաժամը, Հայաստանի և Ադրբեջանի միջև Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, Կասպից ծովում իր հարևանների հետ Ադրբեջանի ունեցած լարվածությունը, Իրանի դեմ պատժամիջոցները և բազմաթիվ

այլ հակամարտություններ, լարվածություն և այլ հանգամանքներ՝ բոլորը խոչընդոտ էին հանդիսանում «Գոտի և ճանապարհ» կենտրոնական երթուղու առավելագույն ներուժի գործարկման ճանապարհին:

Հարավային Կովկասում գլխավոր խոչընդոտը Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն էր, որը ոչ միայն հարևանների, այլև տարածաշրջանից դուրս այլ դերակատարների միջև բոլոր հաղորդակցությունները փակող հանգույցի դեր էր տանում:

2020 թվականի պատերազմը Լեռնային Ղարաբաղում արմատապես փոխել է իրավիճակը Հարավային Կովկասում. 44 օր տևած պատերազմն ավարտվել է նրանով, որ ադրբեջանական զորքերը վերահսկողություն են հաստատել նախկին հայաբնակ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի շրջակա յոթ շրջանների, ինչպես նաև նախկին ԼՂԻՄ-ի այլ տարածքների վրա: Նոր իրավիճակը հանգեցրեց ադրբեջանա-իրանական սահմանի երկարացմանը և Հայաստանի հարավային հատվածում հայ-ադրբեջանական նոր սահմանի ստեղծմանը: Նոյեմբերի 9-ի պայմանագիրը, որը դադարեցրեց պատերազմը, ներառում է կետեր տարածաշրջանի բոլոր հաղորդակցությունների բացման, ինչպես նաև Հայաստանի տարածքով Ադրբեջանից դեպի վերջինիս անկլավ Նախիջևանի հետ կապի ապահովմանը:

Պատերազմում իրենց մասնակցությունն ու ներդրումն ունեցան նաև «մեծ» խաղացողները: Չինաստանը Լեռնային Ղարաբաղի պատերազմում անտեսանելի խաղացող էր, սակայն, ըստ Հայաստանի քաղավիացիայի տվյալների, Չինաստանը ենթադրյալ մարդասիրական օգնությունով 27 ինքնաթիռ է ուղարկել Բաքու այն ժամանակ, երբ մյուս երկրների մեծ մասը փորձում էր պահպանել իրենց չեզոքությունը և ոչինչ չուղարկել որևէ կողմին: Եթե այս տեղեկությունը ճիշտ է, ապա կարելի է ենթադրել, որ Չինաստանը շահագրգռված էր Ադրբեջանի հաղթանակով և, մասնավորապես, այն միջանցքի բացմամբ, որը կկապի Ադրբեջանը Նախիջևանին: Բացի այդ, պատերազմը հանգեցրեց հզոր դաշինքի ձևավորմանն Իսրայելի, Ադրբեջանի, Թուրքիայի և Պակիստանի միջև, որոնք երեքն էլ աջակցում էին Բաքվին Հայաստանի դեմ պատերազմում: Պատերազմի արդյունքում թուրքական ազդեցությունը տարածաշրջանում և բուն Ադրբեջանում անչափ մեծացավ:

Իրանը պատերազմի ընթացքում պահպանեց իր չեզոքությունը՝ հրադադարի շուրջ բանակցություններում միջնորդելու որոշ փորձերով: Իսլամական Հանրապետության և Ադրբեջանի միջև որոշակի լարվածություն առաջացավ, երբ ադրբեջանական մի քանի հրթիռ ընկան Իրանի տարածքում: Դա հանգեցրեց իրանական հակաօդային պաշտպանության համակարգերի մոբիլիզացմանն ու տեղակայմանը հակամարտության գոտուն շատ մոտ, սակայն Իրանի և Ադրբեջանի միջև հետագա սրացում չեղավ, ինչը մեծ հիասթափություն առաջացրեց հայկական կողմի համար: Պատերազմի արդյունքները, սակայն, ոչ մի կերպ չբավարարեցին Թեհրանին, և չնայած այն բանին, որ Իրանը հրապարակայնորեն շնորհավորեց Ադրբեջանին պատերազմում տարած հաղթանակի համար, Իսլամական Հանրապետությունն ունի իր վերապահումները: Նախ, Իրանի և Ադրբեջանի միջև սահմանի երկարացումը կարող է հանգեցնել Բաքվի ազդեցության ընդլայնմանը Իրանի հյուսիսային հատվածում գտնվող էթնիկ ադրբեջանցի բնակչության վրա: Երկրորդ. իսրայելական ազդեցությունը Բաքվում մեծ մտահոգություն է առաջացնում Թեհրանում, և, անշուշտ, պատերազմը թույլ տվեց, որ այդ ազդեցությունն այնքան մեծանա, որ այժմ իսրայելցիներն Ադրբեջանից հսկայական գյուղատնտեսական հողեր են գնում Իրանին մոտ գտնվող նոր ձեռք բերված տարածքներում: Իրանի երրորդ մտահոգությունը Հայաստանի հետ սահմանն է, քանի որ հայ-իրանական սահմանը հանդիսանում էր Իրանի հիմնական կապը այլ շուկաների հետ, և Իրանի ղեկավարությունը հստակ էր իր դիրքորոշման մեջ՝ ընդդիմանալ այս սահմանի ցանկացած փոփոխության: Ի սկզբանե Բաքուն պահանջում էր ստեղծել, այսպես կոչված, Զանգեզուրի միջանցք՝ միջանցք, որը կկապի Ադրբեջանը Նախիջևանին և կունենա արտատարածքային կարգավիճակ և, ըստ էության, կկտրի Իրանն ու Հայաստանը: Իրանի ղեկավարությունը մեկ անգամ չէ, որ դեմ է արտահայտվել այդ ծրագրին, ընդ որում՝ ամենավերջին նախազգուշացումը տեղի է ունեցել 2022 թ. հոկտեմբերին, երբ Իրանի նախագահ Իբրահիմ Ռաիսին նախագահ Ալիևի հետ հանդիպման ժամանակ զգուշացրեց տարածաշրջանում սահմանների ցանկացած փոփոխության անթույլատրելիության մասին : Բանավոր նախազգուշացումներից բացի Իսլամական Հանրապետությունը գլխավոր հյուպատոսություն է բացել նաև Սյունիքի մարզկենտրոն Կապանում: Սա կարող է դիտվել որպես Հայաստանի հետ հարաբերություններն ընդլայնելու՝ Իրանի պլանի

ուղղակի վկայություն և Ադրբեջանին ուղղված ևս մեկ նախազգուշացում՝ սահմանների փոփոխության և հատկապես Սյունիքի մարզ ներխուժման դեմ:

Մյուս կողմից, Ռուսաստանն այս կամ այն կերպ փորձում էր օգնել Հայաստանին, բայց դա արեց իրեն հատուկ ձևով: Որոշ փորձագետների կարծիքով՝ ռուսները պատերազմում հիմնականում փորձարկում էին իրենց սպառազինությունը հռչակավոր դարձած «Բայրաքթար» անօդաչու թռչող սարքերի կամ ընդհանրապես անօդաչու թռչող սարքերի դեմ արդյունավետության տեսանկյունից: Լեռնային Ղարաբաղի տեղացի զինվորների խոսքերով՝ օդային տարածքը փակվում և բացվում էր Ռուսաստանի կողմից, երբ նրանք ցանկանում էին: Այս տեսության ապացույց կարելի է համարել ռուսական զրահատեխնիկայի և հակաօդային համակարգերի արագ արդիականացումը, որը տեղի ունեցավ ԼՂ պատերազմի ավարտից մինչև ուկրաինական պատերազմի սկիզբն ընկած ժամանակահատվածում: Բացի այդ, Ռուսաստանը որոշեց պատժել Հայաստանին և Հայաստանի ղեկավարությանը 2018 թվականին իր թավշյա հեղափոխության և Արևմուտքի հետ համագործակցության մեծացման համար, ինչը բավականին ծանոթ սցենար է Վրաստանի, Ուկրաինայի և հետխորհրդային այլ երկրների համար: Այնուամենայնիվ Ռուսաստանի հիմնական նպատակը Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում ֆիզիկական ներկայություն ունենալն էր, մասնավորապես՝ այնպիսի մի տեղ, որտեղից նրանք կարող են վերահսկել Հյուսիսային գոտու պոտենցիալ այլընտրանքը՝ Կենտրոնական գոտին: Նպատակ, որին նրանք հասել են Լեռնային Ղարաբաղում խաղաղապահ ուժերի տեղակայման և նոյեմբերի 9-ի հայտարարության միջոցով: Ինչպես նշված է համաձայնագրի իններորդ կետում՝ «Ապաշրջափակվում են տարածաշրջանում բոլոր տնտեսական և տրանսպորտային կապերը: Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է Ադրբեջանի Հանրապետության արևմտյան շրջանների և Նախիջևանի Ինքնավար Հանրապետության միջև տրանսպորտային հաղորդակցության անվտանգությունը՝ քաղաքացիների, տրանսպորտային միջոցների և բեռների՝ երկու ուղղություններով անխոչընդոտ տեղաշարժը կազմակերպելու նպատակով: *Տրանսպորտային հաղորդակցության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Ռուսաստանի ԱԴԾ սահմանապահ ծառայության մարմինները*»:

Ղարաբաղյան պատերազմից հետո դժվար ու երկար բանակցություններ են ընթացել Հայաստանի և Ադրբեջանի միջև կապի բացման թեմայով: Ավելին, Երևանն ու Անկարան, որոնց սահմանները փակ էին 1993 թվականից, ներգրավվեցին երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորման գործընթացում: Այս գործընթացները կարող են հանգեցնել տարածաշրջանի բոլոր հաղորդակցությունների ապաշրջափակմանը և ի վերջո ծառայել որպես «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության մաս: ԼՂ պատերազմի հետևանքով լուծվեց նաև մեկ այլ երկարամյա խնդիր. Ադրբեջանն ու Թուրքմենստանը 30 տարվա հակամարտություն են ունեցել ածխաջրածնային վիճելի հանքավայրի օգտագործման շուրջ, որն ուղեկցվել է փոխադարձ սպառնալիքներով և տարաձայնություններով: Այնուամենայնիվ, պատերազմից մի քանի ամիս անց երկու երկրների միջև ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր, որը նոր դռներ բացեց Կասպից ծովի պոտենցիալ նոր հաղորդակցությունների համար, որը «Գոտի և ճանապարհ» գլուխկոտրուկի մեկ այլ մաս է: Բացի այդ, Տրանսկասպյան խողովակաշարը, թվում է, հնարավոր նախագիծ է, որն արդեն կարող է իրականություն դառնալ նոր իրավիճակում:

Գլուխկոտրուկի ևս մեկ կտոր իր տեղն ընկավ սեպտեմբերի 14-ին Սամարղանդում Շանհայի համագործակցության կազմակերպության գագաթնաժողովի շրջանակներում: Չինաստանը, Ղրղզստանը և Ուզբեկստանը համաձայնագիր ստորագրեցին երկաթուղային հաղորդակցության կառուցման վերաբերյալ, որով երեք երկրները կկապվեն Եվրոպային՝ շրջանցելով Ռուսաստանը:

Կենտրոնական գոտու ճանապարհին զուգահեռ, կամ եկեք այն անվանենք արևելքից արևմուտք ճանապարհ, կա ևս մեկ երթուղի, որը դիտարկվում է այլ դերակատարների կողմից: Այս մեկն սկսվում է Հնդկաստանից, ծովով հասնում է Իրանի Չաբահար նավահանգիստ, որը զերծ է արևմտյան պատժամիջոցներից: Չաբահարից այն բաժանվում է երկու ուղղության՝ մեկը դեպի Կենտրոնական Ասիա՝ շրջանցելով Պակիստանը, մյուսը՝ դեպի Սև ծով և Եվրոպա՝ Հայաստանով ու Վրաստանով: Այս ճանապարհի համար նույնպես Հարավային Կովկասը կարող է առանցքային նշանակություն ունենալ Եվրոպային միանալու համար՝ հաշվի առնելով աշխարհի ներկայիս բարդ վիճակը:

Այսպես կոչված՝ «Հյուսիս-Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքը (INSTC) նախապատրաստվում էր երկար տարիներ և պետք է Հնդկաստանը միացներ Ռուսաստանին և Ֆինլանդիային՝ Իրանի Չաբահար նավահանգստի և Ադրբեջանի միջոցով: Եվս մեկ երթուղի ծրագրվում էր Կենտրոնական Ասիայի միջով: Այնուամենայնիվ, Ուկրաինայի պատերազմը մեծ ազդեցություն ունեցավ այս ճանապարհի վրա՝ այնպես, ինչպես Հյուսիսային գոտու վրա: Հնդկաստանն այժմ անջատված է Ֆինլանդիայից և մնացյալ Եվրոպայից Ռուսաստանի դեմ պատժամիջոցների պատճառով: Այսպիսով, անհրաժեշտ է այլընտրանքային ճանապարհ մշակել հնդկական շուկաները Եվրոպային միացնելու համար:

Նոր հնարավոր երթուղին, ամենայն հավանականությամբ, կանցնի Հարավային Կովկասով՝ ևս մեկ անգամ բարձրացնելով տարածաշրջանի կարևորությունը համաշխարհային առևտրային ուղիներում: Եվ հենց այստեղ է, որ Հայաստանի համար հնարավորություն է բացվում դառնալ ենթակառուցվածքների մաս: Վերջինս փորձում է հիմնվել Հնդկաստանի և Իրանի հետ իր լավ հարաբերությունների վրա՝ հավաստիանալու համար, որ միջանցքի՝ Իրանը և Վրաստանը կապող հատվածը կանցնի իր տարածքով: Նախնական տվյալները ցույց են տալիս նախագծի որոշակի զարգացում. Հայաստանը բարձր տեմպերով վերականգնում է իր ճանապարհները, հատկապես՝ հյուսիս-հարավ մայրուղին, որը կապում է Իրանի հետ սահմանակից երկրները Վրաստանի հետ սահմանին: Առաջընթացը կասեցվեց 2020 թվականին արցախյան պատերազմի պատճառով, որտեղ Հայաստանը կորցրեց վերահսկողությունը Կապան և Գորիս քաղաքները կապող հարավային երթուղու մի մասի նկատմամբ և ստիպված եղավ այլընտրանքային ճանապարհ կառուցել: Ճանապարհը կառուցված է ԵՄ-ի 2.6 միլիարդ եվրոյի օգնության փաթեթով, որը տրամադրվեց Հայաստանին 2021 թվականին՝ ժողովրդավարությունը խթանելու և ԼՂ պատերազմից հետո վերականգնվելու համար: Բացի այդ, Հայաստանի կառավարությունը Հնդկաստանի հետ տնտեսական համագործակցության նոր համաձայնագրեր և ռազմական համագործակցության պայմանագրեր է ստորագրել:

Այսպիսով, ներկայումս ունենք երկու երթուղի, որոնք տեսականորեն կարող են մեծ ազդեցություն ունենալ համաշխարհային առևտրի և

տրանսպորտի վրա՝ Արևելք-Արևմուտք կամ Կենտրոնական գոտի և Հյուսիս-Հարավ առանցքում: Երկու երթուղիներն էլ, ամենայն հավանականությամբ, կանցնեն Հարավային Կովկասով: Այնուամենայնիվ, Հարավային Կովկասի երկրներն ունեն իրենց պատկերացումները նախագծերի լոգիստիկայի վերաբերյալ: Քաղաքական առումով կան տարբեր ճամբարների հստակ բաժանումներ՝ ներկայացված տարբեր դաշինքներով: Առաջինը Ադրբեջանի, Թուրքիայի, Պակիստանի և Իսրայելի դաշինքն է, իսկ երկրորդում են Հայաստանը, Իրանը և Հնդկաստանը: Վրաստանը փորձում է չեզոք դեր խաղալ, քանի որ կշահի բոլոր կապերից, եթե կոնկրետ սցենար չլինի: Եվ հետո կա նաև Ռուսաստանը:

Այս հաղորդակցություններում և խաչմերուկներում ռուսական շահն ու նպատակները հասկանալու համար ևս մեկ անգամ անդրադառնամ նոյեմբերի 9-ի հայտարարությանը և, մասնավորապես՝ այն հատվածին, որտեղ ասվում է հետևյալը՝ «Տրանսպորտային հաղորդակցության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում են Ռուսաստանի ԱԴԾ սահմանապահ ծառայության մարմինները»: Ռուսաստանն այնպես արեց, որ այս նախադասությունը ներառվի հայտարարության մեջ, քանի որ ցանկանում է վերահսկել Ադրբեջանը Նախիջևանին կապող ճանապարհը, որն անցնելու է հայկական Սյունիքի մարզով: Սա կնշանակի նաեւ ռուսական վերահսկողություն Կենտրոնական գոտու հայկական հատվածի նկատմամբ: Այս միջանցքի վերահսկումը կնշանակի նաև անուղղակի հսկողություն Հյուսիս-Հարավ ճանապարհի վրա, որը պետք է անցնի ռուսական վերահսկվող միջանցքով: Այսպիսով, Ռուսաստանը կրկին կվերահսկի Հնդկաստանի և Չինաստանի ասիական շուկաները Եվրոպային կապող բոլոր հաղորդակցությունները:

Սակայն, թվում է, թե Հայաստանի ներկայիս իշխանությունն ու հասարակությունը արդեն հոգնել են երկրում ռուսական ազդեցությունից և, ըստ էության, այն պատանդային իրավիճակից, որում հայտնվել է երկիրը Ռուսաստանի հետ ռազմավարական դաշինքի ստորագրումից և ՀԱՊԿ մտնելուց հետո: Ռուսաստանը Հայաստանի ռազմավարական գործընկերն էր, իսկ ՀԱՊԿ-ը պետք է երաշխավորեր Հայաստանի անվտանգությունը իր թշնամական հարևանների՝ Ադրբեջանի և Թուրքիայի դեմ: Ղարաբաղյան պատերազմից հետո ադրբեջանա-

կան ուժերը հարձակվեցին և գրավեցին Հայաստանի ինքնիշխան տարածքները, որին ո՛չ Ռուսաստանը, ո՛չ ՀԱՊԿ-ը որևէ արձագանք չտվեցին: 2022 թվականի սեպտեմբերի 13-14-ին ադրբեջանական վերջին հարձակման արդյունքում ընդամենը երկու օրում զոհվեց ավելի քան 200 հայ զինվոր, և օկուպացվեց Հայաստանի շուրջ 60 քառակուսի կիլոմետր տարածք: Հերթական անգամ Ռուսաստանն ու ՀԱՊԿ-ը օգնության չհասան Հայաստանին, թեև այդ պարտավորությունն ամրագրված է ՀԱՊԿ-ի կառուցվածքում և ռուս-հայկական ռազմավարական դաշինքի համաձայնագրում: Սեպտեմբերյան էսկալացիան զանգվածային բողոք առաջացրեց հայ հասարակության շրջանում ընդդեմ Ռուսաստանի և ՀԱՊԿ-ի, այն նաև հանգեցրեց ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի խոսնակ Նենսի Փելոսիի այցին Հայաստան: Սեպտեմբերյան էսկալացիան մեծապես փոխեց իրավիճակը երկրում: Մի կողմից՝ կա Ադրբեջանը, որին աջակցում է Ռուսաստանը, կամ Ռուսաստանն առնվազն կանաչ լույս է տվել Ադրբեջանին՝ ապահովելու Հայաստանի կողմից համաձայնագրի ստորագրում, որը կապահովի ռուսական վերահսկողության տակ գտնվող միջանցքի բացումը: Մյուս կողմից՝ Ադրբեջանը սպառնում է ուժով բացել միջանցքը և պնդում է ստեղծված միջանցքի արտատարածքային լինելը: Հայաստանն այս պարագայում ոչ մեկի վրա հույս դնել չի կարող, թեպետ կարող ենք տեսնել հստակ ազդանշաններ ԱՄՆ-ի կողմից, որ փորձում է աջակցել Հայաստանին՝ ժողովրդավարությունը և երկրի ինքնիշխանությունը պահպանելու պայքարում: Հայաստանի հիմնական նպատակն է պահպանել իր տարածքի և դրանով անցնող ճանապարհների ինքնիշխանությունը, անկախ նրանից՝ այն կապելու է արևելքն արևմուտքին, թե հյուսիսը հարավին: Հակառակ դեպքում հսկողությունը Ռուսաստանին կտրվի Ադրբեջանի ձեռքով, որը կշարունակի ուժ կիրառել Հայաստանի դեմ՝ ստիպելու Երևանին կնքել այդ գործարքը :

Եզրափակելով՝ ես ինձ թույլ կտամ լինել միամիտ և լավատես: Եթե Ադրբեջանը համաձայնի ուժ չկիրառել Հայաստանի դեմ և չճնշի Հայաստանին ստորագրելու համաձայնագիրը, որը կապահովի ռուսական ներկայությունը իր տարածքը Նախիջևանին կապող ճանապարհի վրա, ապա Հարավային Կովկասը կարող է ազատվել ռուսական ազդեցությունից և դառնալ անկախ և փոխադրումների փոխկապակցված հանգույց, որը կմիացնի արևելքը արևմուտքին և

հյուսիսը հարավին: Եվ նման պարագայում դա Հարավային Կովկասը կդարձնի խաչմերուկ բոլոր կողմերի համար՝ այն վերածելով բառիս բուն իմաստով աշխարհի կենտրոնի, ճիշտ այնպես, ինչպես վերջին 2000 տարիներին կարծել են նրա բնակիչները:

Հայկ Թորոյանը *Կենտրոնական եվրոպական համալսարանի (Բուդապեշտ, Հունգարիա) ազգայնականություն ուսումնասիրող ծրագրի շրջանավարտ է: Նա նաև ունի միջազգային հարաբերությունների բակալավրի և մագիստրոսի կոչումներ Երևանի պետական համալսարանից: Կենտրոնական եվրոպական համալսարանում պաշտպանել է մագիստրոսական թեզ՝ «Խաղաղության հաստատման մարտահրավերները և հնարավորությունները Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում» թեմայով:*

2010 թվականից Հայկն աշխատում է «CMI (Crisis Management Initiative) – Martti Ahtisaari Peace Foundation»-ում: 2016 թվականին դարձել է Հարավային Կովկասում CMI-ի տարածաշրջանային համակարգող: Նախկինում Հայկն աշխատել է ՄԱԿ-ի հայկական ասոցիացիայում, ԵԱՀԿ երևանյան գրասենյակում, ինչպես նաև լրատվամիջոցների և գովազդի ոլորտում: Հայկը նաև աշխատել է Ջինիշյան հիշատակի հիմնադրամում՝ կազմակերպելով և իրականացնելով բանավեճերի դասընթացներ Հայաստանի բոլոր մարզերի դպրոցներում: Հայկը պարբերաբար կազմակերպում է սեմինարներ և դասախոսություններ Հայաստանի և Արևելյան Եվրոպայի ուսանողների համար՝ կոնֆլիկտների վերլուծության և հակամարտությունների լուծման վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ՎՐԱՍՏԱՆ. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՈՒՍԻ, ԹԵ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻ ՀԱՄԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԻՑ ԱՆԴԻՆ. ԱՄՈՒՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԹՈՒՅԼ ԿԱՊԵՐՈՎ

Աննա Գևորգյան-Դավթյան

Հարևաններն ու տարածաշրջանը. Տարածաշրջանային համագործակցության և դրա դժվարությունների մասին խոսելիս հայկական քաղաքական իսթեբլիշմենթը սովորաբար ենթադրում է, որ խոսքը վերաբերում է միայն հակամարտություններ ունեցող կամ քիչ, կամ էլ՝ ընդհանրապես որևէ համագործակցություն չունեցող պետությունների միջև հարաբերությունների վերականգնմանը: Սակայն թերություններ կան նաև բարձր մակարդակի լավ քաղաքական հարաբերություններ ունեցող, ինչպես նաև հասարակության մակարդակով միմյանց նկատմամբ լավ վերաբերմունք ունեցող պետությունների հարաբերություններում, մինչդեռ դեռևս չկան կամ շատ քիչ են տարածաշրջանային ինստիտուցիոնալ համագործակցությունները: Ինչպես քաղաքագետ Աննա Օհանյանն է շեշտել իր «Ցանցային ռեգիոնալիզմը որպես կոնֆլիկտի կառավարման միջոց» գրքում՝ «Հարավային Կովկասը ինստիտուցիոնալ անապատ է»՝ թույլ պետություններով և միմյանց միջև թույլ կապերով: Բայց սա միայն տարածաշրջանի մեծ տերությունների պատճառո՞վ է, թե՞ պետք է ենթադրել, որ տարածաշրջանի երկրներն իրե՛նք չեն ընկալում միմյանց միջև համագործակցության կարևորությունը՝ առանց որևէ այլ դերակատարների միջամտության:

Քաղաքական, հասարակական և անձնական մակարդակում հարաբերությունները Հայաստանի և Վրաստանի միջև լավ հարաբերությունների շատ վառ օրինակ են, սակայն գրեթե գոյություն չունեն ամուր, կայուն ինստիտուցիոնալ փոխգործակցության լծակներ: Ամեն անգամ, երբ իսկապես ունենում ենք ինստիտուցիոնալ նախագծեր, դրանք շարունակում են սերտորեն կապված մնալ արտաքին դերակատարների կամ անձնական նախաձեռնությունների և շահագրգռությունների հետ: Ենթադրում եմ, որ դա պայմանավորված է տարածաշրջանի իմիջով, որն առկա է յուրաքանչյուր երկրում՝ որպես արտաքին քաղաքականության պլանավորման ուղենիշ: Ե՛վ Հայաստանը, և՛ Վրաստանը ստեղծել են իրենց շրջապատի պատկերը՝ խարսխված սեփական ինքնության և ուրիշների առասպելական ընկալումների վրա:

Տարածաշրջանի քարտեզագրման ժամանակ Հայաստանն ու Վրաստանը դա անելու համար ունեն տարբեր մեթոդաբանական գործիքներ: Հայաստանի համար «տարածաշրջան»՝ նշանակում է, առաջին հերթին, փակ սահմաններ և դրա արդյունքում՝ փոքրաթիվ հնարավորություններ:

Տարածաշրջանի մասին խոսելիս Վրաստանը սովորաբար խոսում է եվրոպական երկրների և նրանց տարածաշրջանի մաս կազմելու ցանկության մասին: Այսպիսով, կան երևակայական և իրական տարածաշրջաններ, որոնց սահմանները միշտ չէ, որ համընկնում են:

Հայաստանի ներկայիս իշխող կուսակցության նախընտրական ծրագրում Վրաստանը նշվում է որպես ռազմավարական հարևան և երկիր, որի հետ Հայաստանը պետք է լավ հարաբերություններ պահպանի: Նույն ձևակերպումը տեղ էր գտել նաև 2020 թվականի հուլիսին ընդունված՝ Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մեջ:

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը Վրաստանին անդրադառնալիս օգտագործում է «բարեկամական, ռազմավարական նշանակություն ունեցող...» և այլ բառեր: Նույն բառապաշարն օգտագործում են նախագահն ու խորհրդարանականները: Սակայն այս խոսքերից դուրս՝ շատ քիչ աշխատանք է կատարվել ավելի լավ ինստիտուցիոնալ կապերի և միջին մակարդակի պետական այրերի և դիվանագետների միջև ավելի շատ փոխգործակցության հասնելու համար: Նիկոլ Փաշինյանն արդեն հանդիպել է Վրաստանի երեք վարչապետների հետ, որոնց ամեն անգամ ուղեկցել են տարբեր խորհրդականներ: Այսպիսով, առկա է ակնհայտ ինստիտուցիոնալ հիշողության պակաս, որը ստեղծում է փակ շրջանակի մթնոլորտ, որտեղ կառավարության յուրաքանչյուր անդամ երկխոսությունը սկսում է նույն կետից և վերջում շատ քիչ հնարավորություններ է ստեղծում:

Խորհրդարանական դիվանագիտության մեջ նույնպես քիչ աշխատանք է կատարվում: Բարեկամական խմբերը ձևական տպավորություն են թողնում՝ առանց զգայուն հարցերի քննարկման պատշաճ հարթակի և առկա քաղաքական ու սոցիալական խոչընդոտների հաղթահարման համատեղ ծրագրերի:

Միմյանց և տարածաշրջանի վերաբերյալ այս պատկերացումների պատճառով հարևան երկրները փոքր դեր են խաղում միմյանց կյանքում: Այնուամենայնիվ, արտակարգ իրավիճակները, ինչպիսիք են համաճարակը և պատերազմները, ընդգծում են այն իրականությունը, որ աշխարհագրությունը կարևոր է, և մենք չենք կարող և չպետք է անտեսենք դրա կարևորությունը: Ռուս-վրացական պատերազմի ժամանակ Հայաստանի տնտեսությունը հսկայական բացասական ազդեցություն կրեց, որը, ըստ որոշ պաշտոնյաների, ավելի վատ հետևանքների բերեց, քան 2020-ի ղարաբաղյան պատերազմը: Համաճարակի ժամանակ երկու երկրներն էլ զգացին «առանց սահմանների» վիրուսի վերահսկման ուղղությամբ համատեղ ջանքերի կարևորությունը, իսկ 2020 թվականի ղարաբաղյան պատերազմի ժամանակ ակնհայտ էր, որ Վրաստանի դիրքորոշումը կարող է վճռորոշ լինել Հայաստանի մեկուսացման հարցում:

Ի՞նչ դասեր ենք քաղել այս բոլոր զարգացումներից և ինչպե՞ս ենք պատրաստվում դիմագրավել ապագա սպառնալիքներին, որոնք կարող են գործել ընդդեմ այս երկրների համագործակցության: Այս հարցերը պետք է հասցեագրվեին՝ ամրագրվեին երկրների քաղաքական ծրագրերում: Սակայն երկու երկրներում առկա քաղաքական զարգացումները, ընդհանուր համաշխարհային ճգնաժամի լույսի ներքո և զուգորդված տարածաշրջանային մթնոլորտի հետ, շատ քիչ հնարավորություն են թողնում դրա համար:

Անվտանգություն. Քաղաքական մակարդակում՝ անվտանգության վերաբերյալ ենթադրությունները, տարածաշրջանային տարբեր սպառնալիքները և դրանց արդյունքում՝ անվտանգության տարբեր համակարգերը, որոնցում հայտնվել են Հայաստանն ու Վրաստանը, նշանակալի պատ են ստեղծում հարևանների միջև: Ռուսաստանը, որը Վրաստանի թշնամին է, Հայաստանի, այսպես կոչված՝ «անվտանգության երաշխավորն է». այս երաշխիքը հիմնված է 1997 թ. Հայաստանի և Ռուսաստանի միջև ստորագրված երկկողմ ռազմական համագործակցության համաձայնագրի, ինչպես նաև ՀԱՊԿ-ին Հայաստանի անդամակցության վրա: Թեպետ՝ «անվտանգության երաշխավորի» կարգավիճակը խարխլվել է ղարաբաղյան պատերազմից հետո, որին Ռուսաստանը միջամտեց միայն Հայաստանի պարտությունից հետո և «փրկեց» միայն ռուս խաղաղապահների ներկայության համար էա-

կան նշանակություն ունեցող տարածքները: Հայ հասարակությունը և որոշ քաղաքական կուսակցություններ վստահ էին, որ պատերազմը սկսվեց և տանուլ տրվեց ոչ միայն պատշաճ դիվանագիտության բացակայության և ՀՀ կառավարության կողմից սխալ կառավարման պատճառով, այլ նաև Ռուսաստանի պատճառով, որը ցանկանում էր Հայաստանին ցույց տալ, որ նրա ընտրած ժողովրդավարական ուղին կարող է մահացու լինել երկրի անվտանգության համար: Այն բանից հետո, երբ ադրբեջանական զորքերը 2021 թվականի մայիսի 12-ին, իսկ հետո նաև 2022 թվականի սեպտեմբերի 13-14-ը ներխուժեցին Հայաստանի ինքնիշխան տարածք, այս ենթադրություններն է՛լ ավելի մեծ տարածում գտան, քանի որ Ռուսաստանը և ՀԱՊԿ-ը շատ քիչ բան արեցին կամ ոչինչ չարեցին՝ Հայաստանի ճակատագրի և անվտանգության նկատմամբ անտարբերության վերաբերյալ մեղադրանքները հերքելու ուղղությամբ : Կարծիք կա նաև, որ Ռուսաստանի՝ որպես միջնորդի պասիվ դերը հայ-ադրբեջանական հակամարտությունում պայմանավորված է նրանով, որ նա այժմ չափազանց զբաղված է ուկրաինական պատերազմով և արդյունքում կորցրել է իր ազդեցությունը տարածաշրջանում: Այս մթնոլորտում միջնորդ Վրաստանի ցուցաբերած նոր դերը կարող է կարևոր առաջընթաց լինել տարածաշրջանային համագործակցության շրջանակում: Ռազմագերիների խնդիրն, իրոք, ամենազգայուններից է բուն պատերազմից հետո (եթե նույնիսկ կարելի է պնդել, որ այն ավարտվել է՝ հաշվի առնելով շարունակվող բռնությունները, հրադադարի խախտումները և Ադրբեջանի անվերջ ռազմական հանցագործությունները): Վրաստանի վարչապետի միջնորդությունը, որի արդյունքում 15 հայ զինվորներ վերադարձվեցին հայրենիք, իսկապես ողջունվեց և հույսեր արթնացրեց, որ այդ գործողությունները կարող են շարունակվել:

Վրաստանի՝ ԵՄ հավանական թեկնածու պետության նոր կարգավիճակը և փաստացի թեկնածուի կարգավիճակ չստանալը՝ ի տարբերություն Ուկրաինայի և Մոլդովայի, Հայաստանում հիմք է ստեղծել այն ենթադրության համար, ըստ որի՝ ԵՄ-ն շահագրգռված չէ հարավկովկասյան տարածաշրջանով, և որ Վրաստանի խնդրանքը հետաձգվել է ոչ թե չկատարված պարտավորությունների արդյունքում, այլ՝ աշխարհագրության և ռազմավարական նշանակության պատճառով: Սրա հետ մեկտեղ շրջանառվում է մեկ այլ վարկած, թե հնարավոր չէ միաժամանակ ձեռք բերել թե՛ ժողովրդավարություն և

թե՛ անվտանգություն, և որ իրականում պետք է ընտրել այս երկուսի միջև: Այս վերջին պնդումը ավելի մեծ հիմք ստացավ հատկապես 2020 թ. ղարաբաղյան պատերազմից հետո և ապա՝ 2021 թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ: Ղարաբաղյան պատերազմում պարտության աղետալի հետևանքները, ինչպես նաև Հայաստանում և նրա շուրջ անորոշ զարգացումները, ներքին խոսակցությունները, ինչպես նաև նոր պատերազմի շարունակվող հավանականության մասին քննարկումները հասարակությանն անապահովության սթրեսային վիճակում են պահում: Արդյունքում՝ արտահերթ ընտրությունները, որոնք պետք է թուլացնեին այս լարված քաղաքական մթնոլորտը, մանիպուլյացիայի զանգվածային աղբյուր հանդիսացան ժողովրդավարությանը դեմ արտահայտվող կուսակցությունների համար: «Իշխանության ժողովրդավարական քաղաքականությունը եղել է Հայաստանի բոլոր անհաջողությունների պատճառը հատկապես մարտի դաշտում». սա էր նախորդ քաղաքական էլիտայի ներկայացուցիչների հիմնական փաստարկը Փաշինյանի կուսակցության դեմ: Այս կեղծ վերաբերմունքը վճռորոշ նշանակություն ունեցավ քաղաքացիների որոշումների վրա: Դա կարող է լինել պատճառներից մեկը, որ քաղաքացիներն ընտրեցին 2020 թվականի ղարաբաղյան պատերազմում պարտված քաղաքական կուսակցությանը՝ ենթադրելով, որ դրանով իրենք գոնե կհաղթեն ժողովրդավարության համատեքստում: Անվտանգության և ժողովրդավարության երկատվածության մասին բանավեճերը դեռևս առկա են հայաստանյան քաղաքական դիսկուրսում: Սակայն ԵՄ-ի առավել մեծ ներգրավվածությունը Հայաստանի և Ադրբեջանի միջև միջնորդական գործընթացում, ինչպես նաև Վաշինգտոնի աննախադեպ ակտիվությունը տարածաշրջանում (Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունների ներկայացուցիչների, այդ թվում՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և նախագահ Իլհամ Ալիևի հանդիպումներն իրենց ամերիկացի գործընկերների հետ, Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի նախագահի այցը Երևան, ամերիկացիների հաճախակի հեռախոսազրույցները Հայաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչների հետ) այդ երկատվածությունը փոփոխելու զգալի ներուժ ունեն: Բացի այդ, եթե հնարավոր լինի որոշակի կոնկրետ քայլեր ձեռնարկել Հայաստանի ռազմական անվտանգության ոլորտում և ճնշում գործադրել ադրբեջանական կողմի վրա, ապա երկրում կգերիշխի «ժողովրդավարությունը նշանակում է անվտանգություն» նոր մոտեցումը:

Այդ դեպքում Հայաստանն ու Վրաստանը անվտանգության հարցերում կունենան միասնական հեռանկար՝ նույնիսկ առանց ՀԱՊԿ-ից Հայաստանի դուրս գալու:

Հասարակություններ. Հայաստանի և Վրաստանի բնակչությունների միջև շփումները եղել և մնում են պետությունների միջև հարաբերությունների կարևորության հիմնական ցուցիչը: Միմյանց նկատմամբ վերաբերմունքը ձևավորվում է ինչպես Վրաստանի հայ համայնքի, այնպես էլ համատեղ պատմության և ընդհանուր մշակութային ու քաղաքակրթական արժեքների միջոցով:

Կան մի քանի զգայուն հարցեր, որոնք հոգեբանական լարվածության մթնոլորտ են ստեղծում: Պետությունների քաղաքական կոռեկտությունը երկու երկրների պատմության և մեր օրերի կարևոր ու ողբերգական իրադարձությունների ժամանակ, թեև ընդունվում է պատշաճ ըմբռնումով, ստեղծում է մի դաշտ, որտեղ թեկուզ փոքր ապատեղեկատվությունը կարող է զանգվածային քննադատական ալիքի պատճառ դառնալ:

Հայաստանը՝ ռուս-վրացական պատերազմի ժամանակ, իսկ Վրաստանը՝ ղարաբաղյան երկրորդ պատերազմի ժամանակ, որդեգրեցին հավասար հեռավորության քաղաքականություն:

Եվ սա՝ ապատեղեկատվության դարում և քարոզչական տարբեր գործիքների պարագայում: Գոյություն ունի միտումնավոր ճգնաժամերի նշանակալի ռիսկ, որը ստեղծվել է ինչպես փաստերի ստուգման կարևորության անտեսման արդյունքում, այնպես էլ հարաբերությունների ապակայունացմանն ուղղված արտաքին դերակատարների միջոցով:

Կան որոշ խնդիրներ, որոնք չափազանց ռիսկային կարող են լինել, եթե դրանք անտեսվեն, և թույլ տրվի սպասել բորբոքման ևս մեկ առիթի:

- Դրանց թվում են՝ Ադրբեջանի կողմից՝ Վրաստանը որպես զենքի տարանցիկ գոտի օգտագործելը, և ռուսների կողմից՝ Վրաստանի դեմ ռուսական ռազմակայանի օգտագործումը: Երկու կողմերի փորձագետների փակ քննարկումների

ընթացքում, ինչպես նաև սոցիալական ցանցերում՝ տեղի ունեցած կատակլիզմների ժամանակ, այս երկու թեմաներն էլ պարբերաբար դառնում են միմյանց նկատմամբ անվստահության հիմնական պատճառները: Քիչ է հավանականությունը, որ այս մեղադրանքները կարող են ճիշտ լինել, սակայն հասարակական-քաղաքական դիսկուրսներում այս թեմաները դեռևս շատ տարածված են:

- Սամցխե-Ջավախեթիի հայ բնակչության օգտագործումը Ռուսաստանի կողմից Վրաստանն ապակայունացնելու համար ևս մեկ զգայուն թեմա է հասարակական-քաղաքական դիսկուրսում: Թեև Վրաստան կատարած իր առաջին միջազգային այցի ժամանակ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ Սամցխե-Ջավախեթիի հայերի հիմնական առաքելությունը լինելու է Վրաստանի լավ քաղաքացիներ լինելը և դրա միջոցով հայ-վրացական հարաբերությունների բարելավումը, այնուամենայնիվ, քննարկումներ են շարունակվում Ռուսաստանի աջակցությամբ և ուղղորդմամբ ազգային ապստամբության հնարավորության մասին: Այս մթնոլորտում Նիկոլ Փաշինյանի էթիկական սխալը 2020 թվականի պատերազմի ժամանակ, երբ նա «Սամցխե-Ջավախեթիի» հայերին անվանեց «Ջավախքի» հայեր՝ օգտագործելով տարածաշրջանի հայկական անվանումը, հակահայկական խոսակցությունների զգալի ալիք բարձրացրեց սոցիալական մեդիայում:

Հզոր ինստիտուցիոնալ կապերի ստեղծումը, լրատվամիջոցների անվտանգության միասնական հարթակի ստեղծումը և միջին մակարդակի պետական ներկայացուցիչների, ինչպես նաև փորձագիտական համայնքների անդամների անհատական համագործակցության ամրապնդումը կարող են կարևոր նպաստ բերել Հայաստան-Վրաստան համագործակցությանն ապագայում և, որպես արդյունք, խաղաղությանը տարածաշրջանում:

Աննա Գևորգյան-Դավթյանը *իրանագիտության մագիստրոսի կոչում ստացել է 2009 թվականին Իրանագիտության ամբիոնում (Երևանի պետական համալսարանի արևելագիտության ամբիոն): 2009 թվականի սեպտեմբերից «Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնի» գիտաշխատող է: 2013 թ. նա, որպես այցելու*

գիտնական (visiting scholar), աշխատակցել է Արիզոնայի պետական համալսարանի սոցիալական փոխակերպման դպրոցին: 2014 թվականից դասավանդում է ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնում: 2016 թ. դեկտեմբերից մինչև 2018 թ. հանդիսացել է ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի գիտակրթական կենտրոնի ղեկավարը, համահեղինակել և իրականացրել է հայ զինծառայողների համար նախատեսված միջգերատեսչական դասընթաց: 2018 թ. հունիսին նշանակվել է ՀՀ Անվտանգության խորհրդի քարտուղարի խորհրդական: Նշված պաշտոնից հեռացել է 2018 թ. դեկտեմբերին: Հեղինակել է մի շարք հոդվածներ ժամանակակից Իրանի ներքին քաղաքականության, Հայաստան-Իրան հարաբերությունների, տարածաշրջանային անվտանգության խնդիրների վերաբերյալ, ինչպես նաև կանանց հիմնախնդիրները Իրանում, կանանց իրավունքները իսլամում, գենդերային խնդիրները Հայաստանում և այլ թեմաներով: Աննան նաև արտաքին քաղաքականության վերաբերյալ հաղորդում է վարում «Բուն TV»-ում:

ՎՐԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ԱՌՋԵՎ

Դավիդ Բրագվաձե

Հարավային Կովկասը երբեք աչքի չի ընկել խաղաղությամբ, սակայն վերջին տարիների զարգացումները տարածաշրջանի պետություններին կանգնեցնում են անվտանգության նոր մարտահրավերների առջև:

Այս առումով ղարաբաղյան երկրորդ պատերազմը և դրա հետևանքները առանձնահատուկ կարևոր իրադարձություն էին: Ղարաբաղյան երկրորդ պատերազմի արդյունքները կատարյալ աղետալի եղան Հայաստանի համար (թեև կարող էր ավելի վատ լինել): Միաժամանակ, նրա կախվածությունը Ռուսաստանի Դաշնությունից չնվազեց, քանի որ Ղարաբաղի խնդիրը չվերացավ Երևանի համար: Հայ հասարակությունը կանգնեց նաև այլ կարևոր մարտահրավերների, այդ թվում՝ ներքաղաքական ապակայունացման վտանգի առջև:

Ռուսաստանի Դաշնությունը, որպես ռազմավարական գործընկեր, արդյունավետ օգնություն չցուցաբերեց Հայաստանին և, ընդհակառակը, պատերազմն օգտագործեց սեփական շահերն իրացնելու համար: Ղարաբաղում ռուս խաղաղապահների տեղակայումը շատ կարևոր ձեռքբերում էր Կրեմլի համար, քանի որ ղարաբաղյան հետխորհրդային հակամարտությունը միակն էր, որին Ռուսաստանը՝ որպես ռազմական տերություն, չէր մասնակցում: Ադրբեջանը Հարավային Կովկասում միակ երկիրն էր, որտեղ ռուս զինվորականներ տեղակայված չէին :

Ադրբեջանը ներկայացել է որպես ուժեղ և կազմակերպված ռազմական ուժ, որը կարող է ուժային մեթոդներով վերականգնել իր տարածքային ամբողջականությունը: Միաժամանակ, Ալիևի ռեժիմն ամրապնդեց իր դիրքերը երկրի ներսում, և այսօր Հայաստանի նկատմամբ նրա ագրեսիվ քաղաքականությանն աջակցում են այն քաղաքացիները, ովքեր չեն աջակցում նրա ռեժիմին:

Հատկանշական է, որ ղարաբաղյան երկրորդ պատերազմի արդյունքում Թուրքիան առաջին անգամ, որպես ռազմական ուժ, մտավ տարածաշրջան: Միաժամանակ, Թուրքիան, ի տարբերություն Ռու-

սաստանի, ներկայացավ որպես իր ռազմավարական գործընկերոջ հուսալի և ուժեղ դաշնակից:

Իրանը, որն այս համատեքստում մշտապես ընկալվում էր որպես Հայաստանի դաշնակից, հայտնվեց խաղից դուրս վիճակում: Ամբողջ արևմտյան աշխարհը նույնպես հայտնվեց խաղից դուրս:

Ղարաբաղյան երկրորդ պատերազմի արդյունքները մեծացրել են մարտահրավերները նաև Վրաստանի համար, ինչն առաջին հերթին դրսևորվել է տարածաշրջանում Ռուսաստանի է՛լ ավելի հզորացմամբ: Թբիլիսիի համար խնդիր էր նաև ռուս խաղաղապահների հայտնվելը Ղարաբաղում: Սա ավելի քիչ կարևոր էր ռազմական տեսանկյունից՝ այն պայմաններում, երբ Ռուսաստանը լիովին օկուպացրել և ռազմականացրել է Վրաստանի երկու շրջան և, միևնույն ժամանակ Հայաստանի տարածքում արդեն մեծ ռազմաբազա ունի: Տարածաշրջանում ռուս խաղաղապահների հայտնվելը Վրաստանում ընկալվեց որպես Հայաստանի և Ադրբեջանի վրա Կրեմլի ճնշման լրացուցիչ լծակ:

Ադրբեջանի հետ առանց այն էլ ձգձգվող և դժվարին բանակցություններում որոշակի բացասական ակնկալիքներ կային նաև սահմանների սահմանազատման հարցում: Բարեբախտաբար, այս գործընթացն ավելի վատ սցենարով չզարգացավ, թեև մինչ օրս չի գրանցվել նաև դրական ոչ մի արդյունք:

Մյուս կողմից, Վրաստանը կարողացավ պահպանել իր ավանդական չեզոք դիրքերը նույնիսկ ղարաբաղյան երկրորդ պատերազմի ժամանակ: Թբիլիսիին հաջողվել է որոշակի դրական դերակատարում ունենալ հատկապես գերիների փոխանակման հարցում միջնորդության առումով: Պատմության մեջ առաջին անգամ Հայաստանի և Ադրբեջանի ԱԳ նախարարների հանդիպումը Թբիլիսիում զգալի խորհրդանշական նշանակություն ուներ:

Ուկրաինայում ռուսական ռազմական ագրեսիայի արդյունքում ավելի են աճել Հայաստանի և Վրաստանի առջև ծառացած անվտանգության մարտահրավերները: Այստեղ հարկ է նշել, որ այս ագրեսիայի վերաբերյալ Թբիլիսիի պաշտոնական դիրքորոշումը

չի համապատասխանում Ուկրաինայի ռազմավարական գործընկերոջ պահվածքին և ակնհայտորեն հակասում է Վրաստանի ազգային անվտանգության շահերին:

Իրավիճակը հատկապես սրվեց այս տարվա սեպտեմբերին, երբ ականատես եղանք Ադրբեջանի և Հայաստանի միջև հերթական լայնածավալ ռազմական էսկալացիայի: Էսկալացիայի այս դրվագը դուրս եկավ Ղարաբաղի տարածքից և տեղափոխվեց ուղիղ դեպի երկու պետությունների սահման: Ըստ հայկական կողմի՝ ադրբեջանական ստորաբաժանումները օկուպացրել են Հայաստանի Հանրապետության տարածքի մի մասը:

Ուկրաինայում պատերազմի սանձազերծման պահից Վրաստանի կառավարությունը ենթադրում էր, որ Ռուսաստանը արագ և բացարձակ հաղթանակ կտանի, և հենց այս դիրքորոշման վրա կառուցեց իր հռետորաբանությունը: Թբիլիսիի հռետորաբանությունը չի փոխվել Ուկրաինայի զինված ուժերի հաջողությունների ֆոնին: Այս քաղաքականության ամենաբացահայտ բացասական դրսևորումներից երկուսն արտահայտվել են Ռուսաստանին չբարկացնելու քաղաքականությունը նոր բարձունքի հասցնելու և այս թեման ներքաղաքական խառնաշփոթի համար օգտագործելու մեջ:

Իշխող կուսակցությունն այս ողբերգական իրավիճակն օգտագործում է քաղաքական հակառակորդների և ընդդիմադիր տրամադրված բնակչության դեմ: Ըստ պաշտոնական իշխանական քարոզչության՝ Վրաստանի բոլոր քաղաքացիները, բացառությամբ իշխող կուսակցության կողմնակիցների, ցանկանում են պատերազմ սկսել երկրում և երկրորդ ճակատ բացել Ռուսաստանի համար: Քարոզչական այս հռետորաբանությունը, բացի քաղաքացիների համար վիրավորական լինելուց, երկիրը կանգնեցնում է նաև անվտանգության զգալի մարտահրավերների առջև:

Ցավոք, Վրաստանի իշխանությունն այս ամենադժվար պահին առաջնորդվում է միայն բնազդով և չունի գործողությունների կազմակերպված ռազմավարություն: Թբիլիսին կոնկրետ տեսլական չունի ռազմական մոբիլիզացիայի պատճառով Ռուսաստանի Դաշնությունից փախուստի դիմած քաղաքացիների միգրացիոն հոսքերի աճի

հետ կապված: Ռուսաստանին չզայրացնելու պատրվակով նա ուղղակի բացում է դռները նրանց առջև ու պնդում, որ դա նպաստում է երկրի տնտեսության աճին: Իրականում երկիրը բախվում է անվտանգության ավելի սուր մարտահրավերների՝ լինեն տնտեսական, ժողովրդագրական, քրեածին, սոցիալական, թե այլ: Նշենք նաև, որ Ռուսաստանի քաղաքացիները Վրաստանում 360 օր կարող են մնալ առանց վիզայի: Նշված ժամկետը լրանալուց հետո ցանկացած սահման 1 ժամով հատելու դեպքում այդ ժամկետը նորից սկսվում է:

Ռուսաստանի ներխուժումն Ուկրաինա Հայաստանին նույնպես կանգնեցրեց անվտանգության նոր մարտահրավերների առջև: Ադրբեջանի իշխանությունները հստակ զգացին այն պահը, երբ Ռուսաստանը մտահոգված չէ Կովկասի հարցով, և ագրեսիվ մեթոդներով փորձում է հետապնդել սեփական շահերը: Դա դրսևորվեց Ղարաբաղում նոր բնակավայրերի օկուպացմամբ, ինչպես նաև Լաչինի միջանցքի՝ նրա վերահսկողության տակ վաղաժամ անցմամբ:

Հայաստանում իրավիճակը բարդանում է նրանով, որ նա անվտանգության երաշխիքներ ընդհանրապես չունի: Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը (ՀԱՊԿ), որն այս պահին նախագահում է Հայաստանը, հրաժարվում է պաշտպանել իր անդամ պետությանը: ՀԱՊԿ-ը չի կարողանում կատարել իր մանդատը և Հայաստանին կոչ է անում բանակցել Ադրբեջանի հետ: Սկզբունքորեն, ՀԱՊԿ-ի անարդյունավետությունը պարզ էր նույնիսկ ղարաբաղյան երկրորդ պատերազմի ժամանակ, բայց եթե այդ ժամանակ դեռ կար ինչ-որ ֆորմալ հիմք, ըստ որի՝ հավաքական անվտանգության մեխանիզմը չէր տարածվում Ղարաբաղի տարածքի վրա, հիմա նման փաստարկ չկա: Այն պայմաններում, երբ Ադրբեջանն ունի տնտեսական մեծ հնարավորություններ, ունի հզոր բանակ և հուսալի դաշնակից՝ ի դեմս Թուրքիայի, Հայաստանն իր թույլ տնտեսությամբ և թուլացած բանակով բոլորովին միայնակ հայտնվեց թշնամու առջև:

Ադրբեջանի հավակնություններն աճում են Ռուսաստանի թուլացմանը զուգահեռ: Այսօր նրան միայն Ղարաբաղի հարցի վերջնական լուծումը չի հետաքրքրում: Ալիևը ցանկանում է վերահսկողություն

սահմանել նաև Սյունիքի (Զանգեզուրի)՝ Հայաստանի տարածքով անցնող միջանցքի վրա, ինչն էլ թույլ կտա ուղիղ կապ հաստատել Նախիջևանի էքսկլավի հետ:

Այս պահանջը Հայաստանի համար միանգամայն անընդունելի ու նվաստացուցիչ է, հետևաբար՝ նա նման զիջման չի գնում, իսկ Ալիևը փորձում է օգտվել հնարավորությունների պատուհանից և առավելագույնը քաղել ստեղծված իրավիճակից:

Ակնհայտ է, որ անուշադրության չպետք է մատնել Ղարաբաղը և այնտեղ մնացած հայ բնակչությանը, որի՝ սեփական տներում մնալու շանսերը Ադրբեջանի դիրքերի ամրապնդմանը զուգահեռ կարող են ավելի ու ավելի նվազել:

Միաժամանակ, Հայաստանը հերթական անգամ կանգնեց ներքաղաքական ապակայունացման վտանգի առջև:

Նման պայմաններում Երևանը երեք բարդագույն խնդիր ունի լուծելու.

1. Գտնել ողջամիտ փոխզիջում Սյունիքի միջանցքի հետ կապված, որը նվաստացուցիչ չի լինի նրա՝ որպես ինքնիշխան պետության համար և, միևնույն ժամանակ, բավարար կլինի Ադրբեջանի ագրեսիվ գործողությունները զսպելու համար,
2. Պահպանել Ղարաբաղի հայ բնակչությանը և ապահովել նրա անվտանգության երաշխիքները,
3. Խուսափել ներքաղաքական ապակայունությունից:

Երեք խնդիրներն էլ խիստ փոխկապակցված են, և դրանցից որևէ մեկը չի կարող առանձին լուծվել: Հայաստանին դժվար կլինի պաշտպանել իր շահերը, եթե նման ծանր իրավիճակում հասարակությունը աջակցի իրադարձությունների՝ հեղափոխական սցենարով զարգացմանը: Անկախ այն բանից, թե այսօր ով է աջակցում Փաշինյանին, և ով՝ ոչ՝ նա այսօր հարկավոր է հայոց պետականությունը փրկելու համար: Նա կարողացավ ամենադժվարին իրավիճակում՝ պատերազմում պարտություն կրելուց հետո, ստանալ բնակչության վստահության մանդատը:

Նման իրավիճակում պատերազմի մեջ գտնվող երկրի համար ներքաղաքական ապակայունացումը և հեղափոխական սցենարները գործնականում զրոյացնում են Հայաստանի համար ցանկալի արդյունքների հասնելու հավանականությունը: Սյունիքի միջանցքի հարցում համաձայնության գալը որոշակի երաշխիք կլինի Ղարաբաղի հայ բնակչության անվտանգության համար: Դա, սակայն, ինչպե՞ս պետք է արվի:

Շատ վերլուծաբաններ նշում են, որ այսօր Ադրբեջանը հատկապես անհրաժեշտ է Արևմուտքին՝ որպես էներգառեսուրսների այլընտրանքային աղբյուր: Հետևաբար, Արևմուտքը նրա նկատմամբ համեմատաբար լոյալ կլինի: Այս կարծիքը և՛ ճիշտ է, և՛ սխալ: Այո՛, Արևմուտքին այդ նպատակով իսկապես պետք է Ադրբեջանը, թեև դժվար թե այն հանդուրժող լինի հայկական տարածքների օկուպացման հարցում, երբ պատժամիջոցների խստագույն ռեժիմ է սահմանում համեմատաբար հզոր Ռուսաստանի նկատմամբ: Միևնույն ժամանակ, այս անհրաժեշտությունը երկկողմանի է: Արևմուտքն իր հերթին անհրաժեշտ է Ադրբեջանին՝ իր տնտեսական շահերի իրացման համար, ուստի Ալիևը կխուսափի նման առճակատումից:

Ալիևը պրագմատիկ քաղաքական գործիչ է, և, չնայած իր այսօրվա գերազանցությանը, նա շատ լավ գիտի, որ ամենակարող չէ: Ադրբեջանի առաջնորդը քաջ գիտակցում է իր հնարավորությունների սահմանները, ուստի միշտ կխուսափի այնպիսի քայլ կատարելուց, որը կստիպի իրեն կորցնել այդ առավելությունը: Նման քայլն իսկապես Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքում գտնվող բնակավայրերի ռազմական օկուպացիա կլինի: Սա հաշվի առնելով՝ Ալիևը նման քայլի չի գնա, սակայն կփորձի առավելագույնը ստանալ ստեղծված իրավիճակից:

Նման առավելագույնը կարող է լինել Սյունիքի միջանցքի գործարկումը միջազգային անվտանգության երաշխիքներով: Այս միտքը շատերին կարող էր ուտոպիստական թվալ, բայց հենց այս հոդվածը գրելու պահին հայտարարվեց Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանին միջազգային դիտորդական առաքելություն տեղակայելու վերաբերյալ Նիկոլ Փաշինյանի նախաձեռնության մասին: Ես հնարավորություն ունեցա այս գաղափարը քննարկել իմ հայ գործընկերների հետ:

Կարծում եմ, որ միջանցքի բացումը միջազգային անվտանգության երաշխիքներով՝ լինի դա ՄԱԿ, ԵԱՀԿ, ԵՄ, թե որևէ այլ կազմակերպություն, մի կողմից՝ կբավարարի Ադրբեջանի հավակնությունները, իսկ մյուս կողմից՝ նվաստացուցիչ չի լինի Հայաստանի համար: Միաժամանակ, նման ձևաչափը կմեծացնի Արևմուտքի ներգրավվածությունը Հայաստանում և զգալիորեն կնվազեցնի ռուսական ազդեցությունը:

Միևնույն ժամանակ, Հայաստանը պետք է դիվերսիֆիկացնի իր արտաքին և անվտանգության քաղաքականությունը: Ռուսաստանի հետ տասնամյակների կապերը մեկ օրում չեն խզվի: Այս առումով ՀԱՊԿ-ից անհապաղ դուրս գալը լուծում չէ, ոչ էլ ռազմաբազան Գյումրիից դուրս բերելու պահանջ կա (մանավանդ՝ երբ կայանի մանդատը երկարացվել է մինչև 2059 թվականը): Ստեղծված իրավիճակում սա ուղղակի անհավանական է: Այնուամենայնիվ, տարբեր ուղղություններով, հատկապես՝ Արևմուտքով կապերի ամրապնդումը կենսական նշանակություն ունի: Արևմուտքը շահեր ունի Հայաստանում, և դրա հետ մեկտեղ՝ նրա նկատմամբ որոշակի համակրանք կա: Դրա հստակ ապացույցը խոսնակ Նենսի Փելոսիի այցն էր, ով կարևոր դեր ունեցավ էսկալացիայի վերջին փուլը չեզոքացնելու գործում:

Ստեղծված իրավիճակում Հայաստանի կայունությունը կարևոր է նաև Վրաստանի համար: Չնայած այն հանգամանքին, որ Վրաստանը ռազմավարական գործընկերություն ունի Թուրքիայի և Ադրբեջանի հետ՝ Հայաստանի դերը իսկապես աննշան չէ: Վրաստանի չորս ցամաքային հարևաններից երեքը ղեկավարվում են ուժեղ ավտորիտար հակումներ ունեցող առաջնորդների կողմից: Անձամբ Վրաստանը լուրջ ճգնաժամ ունի քաղաքականության մեջ՝ քաղաքական գործիչների իսպառ բացակայության պատճառով: Այս ֆոնին Նիկոլ Փաշինյանը տարածաշրջանի միակ ժողովրդավար առաջնորդն է: Հայկական ժողովրդավարության պահպանումը, հատկապես, եթե Երևանը կարողանա նվազեցնել իր կախվածությունը Ռուսաստանից և ամրապնդել կապերն Արևմուտքի հետ, ուժեղ խթան կհանդիսանա Վրաստանում ժողովրդավարական գործընթացների հետագա զարգացման համար:

Դավիդ Բրագվաձեն *վերլուծաբան է, ազգային անվտանգության փորձագետ և Անվտանգության քաղաքականության վրացական ինստիտուտի (GISP) հիմնադիրն ու գործադիր տնօրենը: Կազմակերպությունն (GISP) ակտիվ է վստահության ամրապնդման, ազգային անվտանգության և անվտանգության քաղաքականության վերլուծությունների ոլորտում: Աշխատել է Վրաստանի ազգային խորհրդում 2014-ից 2019 թվականներին, իսկ 2016 թվականից եղել է Վերլուծական բաժնի տնօրենը: 2011 թվականին Դավիդը գերազանցությամբ ավարտել է Թբիլիսիի պետական համալսարանը՝ ժամանակակից և արդի պատմություն (մագիստրատուրա) մասնագիտությամբ: Ներկայումս նույն համալսարանի ասպիրանտ է: Նրա ուսումնասիրության հիմնական ոլորտն ընդգրկում է սառը պատերազմի վերջին տասնամյակը և ԱՄՆ-ԽՍՀՄ բանակցությունները: Դավիդը աշխատել է որպես հրավիրյալ դասախոս Սևծովյան միջազգային համալսարանում և Կովկասի համալսարանում դասախոսություններ կարդալով միջազգային հարաբերությունների պատմության, քաղաքական գաղափարախոսությունների, քաղաքական մտքի պատմության, վրաց-ռուսական հարաբերությունների և ազգային անվտանգության քաղաքականության թեմաներով:*

ՀԱՅԵՐՆ ՈՒ ՎՐԱՑԻՆԵՐԸ. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՆՀԱՏՆԵՐԸ 2022 Թ. ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՎՐԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿՆ ՈՒ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Շորենա Կոբաիձե

Պատմականորեն՝ Վրաստանը եղել է բազմաթիվ էթնիկ և կրոնական խմբերի տունը: Վերջին մարդահամարի համաձայն, որն անցկացվել է 2014 թվականին, ազգային փոքրամասնությունները կազմում են բնակչության 13.2%-ը, որոնցից ամենամեծ էթնիկ խմբերը ադրբեջանցիներն են (6.3%) և հայերը (4.5%): Մյուս էթնիկ խմբերը, որոնք միասին կազմում են բնակչության 2,4%-ը, ներառում են օսերին, ռուսներին, հույներին, քրդերին, ասորիներին, չեչեններին (Վրաստանում նաև հայտնի են որպես քիստներ), հրեաներին, ուկրաինացիներին, լեհերին և այլն:[8] Ադրբեջանցիներն ու հայերը հիմնականում բնակվում են համապատասխանաբար Քվեմո Քարթլիի և Սամցխե-Ջավախեթիի շրջաններում: Սակայն, նրանք լավ ներկայացված են նաև Կախեթիի և Շիդա Քարթլիի շրջաններում և Թբիլիսի ու Բաթում քաղաքներում:



8 GeoStat, Total population by region and etnicitiy (http://census.ge/en/results/census1/demo)

Էթնիկ փոքրամասնությունների միգրացիայի դինամիկան 1989-2014 թթ.

Անկախությունից ի վեր՝ Վրաստանը լավ առաջընթաց է գրանցել փոքրամասնությունների ընդգրկմանը նպաստող քաղաքականության շրջանակի ստեղծման գործում: Բայց չնայած պետության ջանքերին, որոնք ուղղված են մեծամասնություն կազմող էթնիկ վրացիների և փոքրամասնության բնակչության միջև առկա անջրպետը կրճատելուն, վերջնարդյունքներն այնքան էլ միանշանակ չեն: Էթնիկ փոքրամասնությունների ճնշող մեծամասնությունը իրեն մարգինալացված է զգում որպես վրացական հասարակության անդամ: Վրաստանում որոշումներ կայացնողների շրջանում տարածված է կարծիքը, որ ոչ էթնիկ խմբերի տնտեսական բարեկեցության անհավասարությունը հաղթահարելու հիմնական մարտահրավերը կապված է լեզվի հետ: Փոքրամասնությունների բնակչության մեծ մասի՝ վրացերենին չտիրապետելը, մեկուսացվածությունը և փոքրամասնություններին հատուկ մտահոգությունների համակարգային անտեսումը խոչընդոտում են Վրաստանին տնտեսապես, քաղաքականապես և սոցիալապես լիարժեք ինտեգրմանը: Էթնիկ վրացիների փաստարկն այն է, որ չնայած փոքրամասնություններին առաջարկվող լեզվի դասընթացների բազմաթիվ հնարավորություններին, նրանք պարզապես շահագրգռված չեն սովորելու: Այս առումով՝ բեռը հստակ դրված է փոքրամասնությունների վրա:

Խորհրդային Միության ժամանակ ազգային փոքրամասնությունները կարող էին ուսանել, այսպես կոչված, «փոքրամասնությունների դպրոցներում», որտեղ վրացերենը դասավանդվում էր միայն որպես առանձին առարկա, իսկ ուսուցումն իրականացվում էր մայրենի լեզվով: Սա, ի թիվս այլ պատճառների, նպաստեց ազգային փոքրամասնությունների, հատկապես Քվեմո Քարթլիի ադրբեջանցիների և Սամցխե-Ջավախեթիի հայերի մեկուսացմանը. երկու շրջաններ, որտեղ այս փոքրամասնությունները բնակվում են կոմպակտ կերպով: Անգամ երկար տարիների անկախությունից հետո Վրաստանի էթնիկ փոքրամասնությունների զգալի մասը, որ հիմնականում բնակվում է Քվեմո Քարթլիում և Սամցխե-Ջավախեթիում, մինչ օրս չի տիրապետում պետական լեզվին՝ վրացերենին: Փոքրամասնությունների շրջանում վրացերենի սահուն իմացությունը բարձր է մայրաքաղաքում և երկրի խառը բնակչությամբ այլ շրջաններում, մինչդեռ ավելի

հեռավոր շրջաններում, որտեղ բնակվում են մոնոէթնիկ փոքրամասնություններ, ավելի ցածր է: Քվեմո Քարթլիի ադրբեջանցիների մոտ 82%-ը և Սամցխե-Ջավախեթիի հայերի 71%-ը վարժ վրացերեն չեն խոսում:[9]

Վրաստանի կառավարության նախաձեռնած, այսպես կոչված՝ «1+4» ծրագիրը զգալի ազդեցություն է թողել էթնիկ փոքրամասնությունների ուսանողներին վրացական բարձրագույն կրթական համակարգում ընդգրկելու գործընթացի վրա: Մինչ այդ ը ազգային փոքրամասնությունների միայն մի քանի ներկայացուցիչներ էին կարողանում ընդունվել վրացական բարձրագույն ուսումնական հաստատություններ: Ծրագիրը թույլ է տալիս էթնիկ փոքրամասնությունների ուսանողներին սովորել Վրաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ իրենց մայրենիով հանձնելով ընդհանուր հմտությունների ոլորտում միայն մեկ քննություն: Ամեն տարի կառավարությունը կրթաթոշակներ է տրամադրում մոտ 100 էթնիկ հայ և 100 էթնիկ ադրբեջանցի ուսանողների՝ մեկ տարի ինտենսիվ լեզվական ծրագրի միջոցով վրացերեն սովորելու համար: Այնուհետև լեզվի քննություն հանձնելուց հետո ուսանողները շարունակում են ուսումը բակալավրիատում: Երկրի որոշ խոշորագույն բարձրագույն ուսումնական հաստատություններ մասնակցում են «1+4» ծրագրին, այդ թվում՝ Թբիլիսիի պետական համալսարանը, Իլիայի պետական համալսարանը, Վրաստանի տեխնիկական համալսարանը, Ախալցխայի պետական համալսարանը, Պաշտպանության ազգային ակադեմիան և Ներքին գործերի ակադեմիան (Ոստիկանության ակադեմիա):

Թեև «1+4» ծրագիրը հիմնականում համարվում է հաջողված, մատնանշվում է, որ ծրագիրը չի կարողանում ապահովել իր հիմնական բաղադրիչներից մեկը՝ տարբեր ծագումներ ունեցող ուսանողների ինտեգրման խթանումը: Ծրագրի սկզբնական փուլում դասարանները տարանջատվում էին էթնիկական հիմքով՝ էթնիկ հայ և ադրբեջանցի ուսանողների միջև հնարավոր կոնֆլիկտներից խուսափելու համար: Թեպետ հետագայում ստեղծվեցին էթնիկապես բազմազան

9 Gorgadze, N. (2016). Rethinking Integration Policy-Dual *Ethnic and Cultural Identity. International Journal of Multi-lingual Education, December 2016 edition*

դասարաններ, երկու խմբերի միջև փոխգործակցությունն ու սոցիալականացումը մնաց սահմանափակ: Պետական պաշտոնյաների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների շրջանում հակասական կարծիքները փոքրամասնություններին ինտեգրելու՝ կառավարության միջոցառումների և ընդհանուր առմամբ իրականացվող քաղաքականության վերաբերյալ, ընդգծում են նրանց միջև համաձայնության բացակայությունը՝ քաղաքացիների նկատմամբ վերաբերմունքի և փոքրամասնություն-մեծամասնություն անհավասարությունների խնդրի շուրջ: Փոքրամասնությունների վրա պետական քաղաքականությունների ինտեգրման ջանքերի առաջնային հետևանքների վերաբերյալ տեղեկատվությունը թերի է: Վրաստանի կառավարությունը կենտրոնական մակարդակում ուշադրություն է դարձնում շրջանային տվյալների հավաքագրմանը և չի առանձնացնում տվյալներն ըստ էթնիկ պատկանելության: Տեղական ինքնակառավարման մարմինները չունեն միջոցներ, հմտություններ կամ շահագրգռություն՝ այս տեղեկատվությունը համակարգված կերպով հավաքելու համար: Վստահելի տվյալների այս պակասը խնդիր է առաջացնում էթիկական և/կամ կրոնական անհամամասնությունները հասկանալու համար, խոչընդոտում է ապացույցների վրա հիմնված որոշումների կայացմանը և կարող է խորացնել խոցելիությունը ճգնաժամերի ժամանակ: Ավելին, տեղական կարիքները և մտահոգությունները բացահայտելու նպատակով շրջանային մակարդակով գնահատումներ սովորաբար չեն իրականացվում, չեն իրականացվում նաև հարցումներ՝ պետական ծառայությունների մատուցմանը քաղաքացիների բավարարվածության վերաբերյա: Բազմազանության կառավարման և փոքրամասնությունների մասով զգայուն հաշվետվությունների պլանավորման ջանքերը չունեն բավարար ապացույցներ, որոնք կարող են որոշել, թե արդյո՞ք փոքրամասնությունների մարտահրավերներին և անհավասարություններին արձագանքելու որոշումներն արդյունավետ են, և արդյո՞ք փոքրամասնությունների առջև ծառացած անհավասարությունները իսկապես լուծվում են:

Ավելին, փոքրամասնությունների նկատմամբ էթնիկ վրացիների շրջանում եղած վստահության պակասը հաճախ արտահայտվում է այնպիսի տեսակետներով, ըստ որոնց՝ փոքրամասնությունները չեն կիսում նույն արժեքներն ու ձգտումները, հետևաբար՝ նրանք

հաճախ ներկայացվում են որպես պոտենցիալ սպառնալիք կամ որպես երկրորդ կարգի քաղաքացիներ: Լեզվի տիրապետման խնդրից զատ՝ անհավասարությունը բացասաբար է անդրադառնում նաև սոցիալական ներդաշնակության վրա: Փոքրամասնությունները չունեն քվոտաներ՝ իրենց քաղաքական մասնակցությունը մեծացնելու համար: Էթնիկ փոքրամասնությունները գրեթե ներկայացված չեն տեղական, ինչպես նաև կենտրոնական կառավարման մակարդակներում: Վրացական ակտիվ քաղաքական կուսակցությունների մեծամասնությունը, հիմնականում՝ ռեսուրսների խրոնիկ պակասի պատճառով, երբեք բավարար չափով «ներդրումներ» չի անում ազգային փոքրամասնություններ ունեցող տարածաշրջաններում: Արդյունքում՝ Վրաստանի ազգային փոքրամասնությունները մնում են թերի ներկայացված և երկրի քաղաքական կյանքին մասնակցելու սահմանափակ հնարավորություններ են ունենում: Ո՛չ Վրաստանի խորհրդարանը, ո՛չ էլ Վրաստանի քաղաքական կուսակցությունները պատշաճ կերպով չեն արտացոլում ազգային փոքրամասնությունների մասնաբաժինը իրենց կազմում և, հետևաբար, չունեն որևէ քաղաքականություն, որն արդյունավետ կերպով կհասցեագրի ազգային փոքրամասնություններին համակարգային առումով մտահոգող խնդիրները: Քաղաքական կուսակցությունները նաև բավարար ժամանակ կամ ջանք չեն ներդնում այնպիսի համակարգեր և ցանցեր ստեղծելու ուղղությամբ, որոնք կօգնեն բարելավել իրենց կազմակերպչական ներկայությունը էթնիկապես տարբեր տարածաշրջաններում: Այդ պատճառով կուտակվում են միջէթնիկ, ազգային և քաղաքական բազմաթիվ մտահոգություններ, և դրանց քաղաքական դրսևորման արդյունավետ ինստիտուտների բացակայության պատճառով այդ մտահոգությունները մեծանում են՝ դառնալով դժգոհություններ, որոնք դժվար է լուծել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների իրական քաղաքական մասնակցության բացակայության և արտահայտվելու ու ներգրավվածության հարթակների սակավության պայմաններում:

Ընտրությունների մասնակցության վերաբերյալ վերջին ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ փոքրամասնություններն ավելի ու ավելի քիչ են աջակցում իշխող կուսակցությանը, ինչը հերքում է այն տարածված կարծրատիպը, թե փոքրամասնությունները միշտ

քվեարկում են իշխող ուժի օգտին:[10] Համաձայն բազմաթիվ զեկույցների և ուսումնասիրությունների՝ էթնիկ փոքրամասնությունների ներգրավվածությունը քաղաքականության մեջ՝ որպես թեկնածուներ, ընտրողներ և ակտիվիստներ, Վրաստանում մնում է սահմանափակ: Տարածված կարծիք կա առ այն, որ ներքաղաքական նորությունների, ինչպես նաև խնդիրների սահմանափակ հասանելիությունը փոքրամասնությունների մայրենի լեզուներով՝ ազդում է ընտրություններին մասնակցելու նրանց ցուցանիշի վրա: Փոքրամասնությունները գործընթացին մասնակցում են որպես ընտրողներ և ընտրական վարչակազմի պաշտոնյաներ, սակայն նրանց մասնակցությունը շատ սահմանափակ է կուսակցական ծրագրերի ձևավորմանը, ինչպես նաև որպես թեկնածու առաջադրվելու հարցում: Էթնիկ փոքրամասնությունների կարիքների վերաբերյալ կուսակցությունների մոտեցումները մակերեսային են՝ հաճախ կենտրոնանում են լեզվի ուսուցման և խտրականության վերացման ուղղությամբ, անտեսելով համայնքների համար բովանդակալից մասնակցություն ապահովելու հարցը:[11]

Վերջին տարիներին անհանդուրժողականության աճ է նկատվում Վրաստանի բնակչության տարբեր խմբերի միջև, հատկապես քրիստոնյա և մահմեդական բնակչության շրջանում: Եղել են նաև բացահայտ լարվածության որոշ դեպքեր, որոնցից մի քանիսը նույնիսկ վերածվել են բռնության:[12] Թեպետ ամենամեծ բողոքը եղել է Վրաստանի Քվեմո Քարթլիի և Սամցխե-Ջավախեթիի շրջաններում քրիստոնյա և մահմեդական բնակչության միջև աճող բռնությունների վերաբերյալ, ատելության խոսքի որոշ դեպքեր, որոնք հիմնականում մնացել են աննկատ, գրանցվել են նաև տարբեր էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ: Հաճախ լինում են դեպքեր, երբ որոշակի խմբեր մոբիլիզացվում են փոքրամասնությունների կոմպակտ բնակության համայնքներում՝ աջակցելու տեղական բնակչության արմատականացմանը և տարածաշրջանում անջատողականությանը:

10 Kakhishvili, L. (2018). Competing for Votes of Ethnic Minorities in Georgia: The 2017 Local Elections. *Centre for the Studies of Ethnicity and Multiculturalism*

11 Netherlands Institute for Multiparty Democracy (2017). Integration of National Minorities in Georgia

12 Massive Disturbances in Dmanisi after Local Shop Incident, https://civil.ge/archives/419991

Լրատվամիջոցներում կա բացասական կարծրատիպերը հավերժացնելու միտում՝ աղմուկ բարձրացնելով այն պատմությունների շուրջ, որոնք ներկայացնում են հայերին՝ որպես անջատողականներ կամ Ռուսաստանին համակրողներ՝ սովորաբար առանց գործի փաստերը ամբողջությամբ հետաքննելու: Էթնիկ հայերի մասին ամենատարածված կարծրատիպն այն է, որ նրանք շահագրգռված չեն սովորել վրացերեն և հրաժարվում են ինտեգրացիոն գործընթացին մաս կազմելուց: Անջատողականության մասին մեղադրանքներից բացի Վրաստանում որոշ հայատյաց խմբեր պնդում են, որ հայերը իրենցն են համարում վրացական մշակույթի որոշ ասպեկտներ և ունեն հարուստ միջազգային լոբբի Արևմուտքում:

Փոքրամասնությունների կոմպակտ բնակության վայրեր ունեցող համայնքներում ենթակառուցվածքները թույլ են զարգացած: Էթնիկ փոքրամասնության բնակչություն ունեցող գյուղական շրջաններն ավելի հաճախ առաջնահերթություն են տալիս համայնքի հիմնական կարիքներին, մինչդեռ էթնիկ մեծամասնությամբ բնակեցված տարածքները հակված են առաջնահերթություն տալ դոնորների և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մշակվող ժամանակակից տեխնոլոգիաներին: Երբ խոսքը վերաբերում է գյուղատնտեսական հողերի բաշխմանը և բաժանմանը, կա կարծիք, որ փոքրամասնությունները տուժում են հողերի անարդար բաշխումից: Բազմաթիվ դեպքեր են եղել, երբ փոքրամասնությունները բողոքել են ոռոգման համակարգերի անհասանելիությունից և այլն: Սամցխե-Ջավախեթիի շրջանի էթնիկ հայերը հաճախ նշում են կենտրոնական իշխանությունների մակարդակում կապերի և ցանցերի բացակայության մասին, ինչը խոչընդոտում է կառավարությունից ավելի մեծ ռեսուրսներ ներգրավելու և օգնություն ստանալու գործընթացին: Գյուղատնտեսության ոլորտում աշխատող շատ տղամարդիկ տարեկան արտագնա աշխատանքի են մեկնում այլ երկրներ, քանի որ գյուղատնտեսական արտադրությունից բավարար գումար չեն վաստակում իրենց ընտանիքը պահելու համար: Էթնիկ հայ փոքրամասնություն կազմող տղամարդիկ հակված են գնալու արտագնա աշխատանքի Ռուսաստան և Հայաստան, որտեղ նրանք կարող են խոսել տեղական լեզուներով: Շատերը մեկնում են՝ տարեկան մոտավորապես վեց ամսով աշխատելու շինարարության, ինչպես նաև գյուղատնտեսության ոլորտներում՝ վաստա-

կելով ավելին, քան կարող էին վաստակել Վրաստանում: Սամցխե-Ջավախեթիի էթնիկ հայերի մոտավորապես երկու երրորդը մեկնում է Ռուսաստան, իսկ մնացածները՝ Հայաստան:[13] Շատ էթնիկ հայեր ունեն Ռուսաստանի քաղաքացիություն, ինչն օրինական է դարձնում միգրացիան, իսկ փոքրամասնություն կազմող ֆերմերների մեծ մասը խոսում է ռուսերեն, ուստի նրանք կարողանում են շփվել տեղական լեզվով: Փոքրամասնությունների շրջանների երիտասարդները ավելի հեռուն են նայում՝ կենսապահովման համար իրենց ծնողների և պապերի կողմից կիրառվող գյուղատնտեսությունից անդին, և հակված են անցում կատարելու դեպի սպասարկման ոլորտ, ներառյալ՝ զբոսաշրջություն: Սակայն ոմանց՝ վրացերենով խոսելու կարողությունը և այլ հնարավորությունների մասին տեղեկացվածությունը նրանց չի ազատում տարբեր արժեքային շղթաներում իրենց մասնակցության վրա ազդող տարբեր գործոններից: Անհավասարությունները, որոնք այս շրջաններում խոչընդոտում են փոքրամասնությունների երիտասարդության հզորացմանը ձեռներեցության ասպարեզում, հիմնականում ներառում են հասանելիության հետ կապված խնդիրներ և հաճախ՝ պետական կառույցների՝ վերից վար վերահսկողության փաստը: Որոշ երիտասարդներ համարում են, որ ռեսուրսներից, այդ թվում՝ հանրային ծառայություններից և ենթակառուցվածքներից, աշխատանքի հնարավորություններից և գյուղատնտեսական աջակցության ծրագրերից օգտվելու իրենց կարողությունը սահմանափակվում է քաղաքական ուժի դինամիկայով և գերիշխող տրամադրություններով: Հեռավոր համայնքների երիտասարդները հաճախ մեկնում են իրենց պատմական հայրենիք՝ ուսումը շարունակելու, և հազվադեպ են վերադառնում: Հայաստանում և Ադրբեջանում ԲՈՒՀ-երն ավարտելուց հետո շատ երիտասարդներ չեն վերադառնում Վրաստան:

Երկրում փոքրամասնությունների առջև ծառացած մարտահրավերներն ու անհավասարությունները, էթնիկ վրացի մեծամասնության համեմատ, հաճախ նրանց դնում են անբարենպաստ վիճակում: Սա ավելի է սրվում, երբ որոշում կայացնողներն իրականացնում են քաղաքականություններ՝ առանց տարանջատված տվյալների

13 Babayan, K. (2018). Armenians Seasonal Matriarchy in Georgia. Chai-Khana. https://chaikhana.media/en/stories/747/armenians-seasonal-matriarchy-in-georgia

և հիմնված ընդհանուր կարծրատիպերի վրա, և երբ փոքրամասնություններին տեղեկատվություն կամ հնարավոր օգնություն չի տրամադրվում: Նման գործոնները նպաստում են, որ փոքրամասնությունները զրկվեն որակյալ պետական ծառայություններից և զարգացման հնարավորություններից: Դա նաև նպաստում է բացառման երկարաժամկետ ցիկլերի ստեղծմանը, որտեղ փոքրամասնությունները բախվում են կրթության, քաղաքական ներկայացվածության և եկամուտների ցածր մակարդակի խնդիրների : Չնայած այնպիսի բազմաթիվ օրենսդրական նախաձեռնություններին, ինչպիսիք են «Քաղաքացիական հավասարության և ինտեգրման պետական ռազմավարության ընդունումը»,[14] տարբեր փոքրամասնությունների խմբերի, ինչպես նաև փոքրամասնության և մեծամասնության միջև հաղորդակցությունը մնում է սահմանափակ, իսկ այս խնդրի լուծման ուղղությամբ որևէ գործնական կամ արդյունավետ միջամտություն չի արձանագրվում: Թեև իշխանությունների կողմից հաճախ նշվում է, որ վրացերենի չիմացությունն է հիմնական խնդիրը, այն դեպքերում, երբ չկա լեզվական խոչընդոտ, փոքրամասնությունների խմբերի իրական ընդգրկումն ու մասնակցությունը շարունակում է մնալ սահմանափակ: Դա պայմանավորված է փոքրամասնությունների մեկուսացման և քաղաքական գործընթացներից նրանց համակարգված դուրսմղման երկարամյա պատմությամբ:

Ներկայիս աշխարհաքաղաքական իրավիճակը և սուր էթնիկ բաժանումները մեծապես բարդացնում են հարավկովկասյան տարածաշրջանի սոցիալ-տնտեսական խնդիրները: Պետությունների, քաղաքական էլիտաների և այլոց կողմից ներառման և հաշտեցման վրա սևեռված ուշադրությունը բաց է թողել տարածաշրջանի մեծագույն արժեքի՝ բազմազանության առավելությունը: Հաշտեցման և ինտեգրման ճանապարհին կարևոր քայլ է փոքրամասնությունների էթնիկ ժառանգության և տնտեսական ներուժի ճանաչումը, ինչպես նաև այն գիտակցումը, որ տնտեսական աճը հնարավոր է, եթե վերացվեն կառուցվածքային անհավասարությունները: Որոշում կայացնողները հաճախ լիովին չեն գիտակցում փոքրամասնությունների առջև ծառացած խնդիրներն ու մարտահրավերները, քանի որ

14 State Strategy for Civic Equality and Integration and Action Plan - SMR.GOV.GE - Offce Of The State Minister Of Georgia For Reconciliation And Civil Equality

նրանք այդ խմբերի հետ չեն խորհրդակցում: Օրինակ, ինքնությունը Վրաստանում, որը սահմանվում է սեփական հայրենիքի հետ կապով, մայրենի լեզվով և կրոնական խմբին պատկանելությամբ, մեծամասնություն-փոքրամասնություն հարաբերությունների շուրջ ստեղծել է «մենք՝ ընդդեմ նրանց» մտածելակերպը: Լավագույն դեպքում, այս վերաբերմունքն անտեսում է բազմազանությունը, իսկ վատագույն դեպքում՝ այն փոքրամասնություններին վերաբերվում է որպես անվտանգության կամ սոցիալական սպառնալիքի՝ հետագայում նրանց մարգինալացնելով և նրանց նկատմամբ կիրառելով խորը նախապաշարմունքներ և կողմնակալություն, խտրականության, ատելության խոսք և ազգայնականություն:

Տնտեսական ձեռքբերումները չեն վերածվել ավելի մեծ բարեկեցության և հնարավորությունների բոլոր խմբերի միջև հավասարապես: Ճգնաժամերի ընթացքում, երբ աղքատ և մարգինալացված համայնքները բախվում են է՛լ ավելի աղքատ և մարգինալ դառնալու ռիսկերի, պետք է ապահովվի ավելի մեծ և արդարացի տնտեսական և սոցիալական հնարավորություն՝ կոնսոլիդացնելով մասնատված կողմերին և բնակչությանը ողջ տարածաշրջանում: Խաղաղության կառուցման գործընթացների զարգացումը խոչընդոտող սահմանափակումների գիտակցումն ու դրանց վերացումը կառավարություններից պահանջելու է ավելի շատ ջանքեր և նվիրում, սոցիալ-տնտեսական հնարավորությունների կիրառում, ժողովուրդների փոխկապակցում, բոլոր փոքրամասնությունների և մեծամասնության համար աշխատատեղերի և հիմնական ծառայությունների հասանելիության հավասարության խթանում: Հետևաբար՝ այս կարևոր ջանքերի կիրառումը քաղաքականության մեջ և ռեսուրսների բաշխման հարցում ներառում է առկա պատումների փոփոխում Հարավային Կովկասի էթնիկապես զգայուն իրականության մեջ:

Շորենա Կոբահիձեն *15 տարվա փորձ ունի մարդու և փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և ինտեգրման ոլորտում, վերահսկել և տեխնիկական աջակցություն է ցուցաբերել ինտեգրացիոն ծրագրերի, այդ թվում՝ սերտորեն համագործակցել է մի շարք պետական կառույցների հետ: Տիկին Կոբահիձեն օժտված է մեծահասակների ուսուցման կարողությունների զարգացման հզոր հմտություններով, աջակցություն է ցուցաբերել պետական պաշտոնյաներին՝*

փոքրամասնությունների խնդիրների և բազմազանության կառավարման վերաբերյալ նրանց հմտությունները, գիտելիքները և փորձը կատարելագործելու հարցում: Նա բացառիկ գիտելիքներ ունի Վրաստանում և Հարավային Կովկասի տարածաշրջանում ԱՄՆ ՄԶԳ-ի, ԵՄ-ի և այլ դոնորների գործունեության վերաբերյալ, հատկապես էթնիկ, կրոնական փոքրամասնությունների և այլ սոցիալապես անտեսված խմբերի կյանքի տարբեր ասպեկտներում ինտեգրելուն ուղղված գործողությունների մասին: Ունենալով ավելի քան 12 տարվա փորձ պետական և ոչ պետական կառույցների հետ սերտորեն համագործակցելու մասով և նպաստելով տարբեր մարգինալացված խմբերի միջև համապատասխան քաղաքականության արդյունավետ համակարգմանը և հաղորդակցմանը՝ տիկին Կոբահիձեն լայն կապեր և ընկալում ունի Վրաստանի զարգացման ընդհանուր պատկերի վերաբերյալ:

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՎՏԱՆԳՎԱԾ ԱԶԳԱՅԻՆԸ
Արմեն Օհանյան

Հայաստանցիներն էսօր ապրում են մոտալուտ աղետի սպասումով՝ սարսափած պատմության պահարանից դուրս թափված կմախքներից:

Ավելի ճիշտ՝ աննախադեպ մոտալուտ աղետի սպասումով, քանի որ աղետի սպասումը հայկական համատեքստում սովորական վիճակ է, իսկ վերոնշյալ կմախքները նախկինում էլ էին աչքով անում հայերին՝ անցյալի չփակված դռներից:

Մերօրյա հայաստանցու հուզական վիճակը «աննախադեպ»[15] է դարձնում այն հանգամանքը, որ գրեթե երկու դար անխափան աշխատած «օրհնվի էն սհաթը, որ ռսի օրհնած ոտը հայոց լիս աշխարհ մտավ»[16] մեգա նարատիվը այլևս չի աշխատում, բայց վերջնականապես չի փլուզվել, ինչը հանրային գիտակցության մեջ առաջացրել է կոգնիտիվ դիսոնանս:

Գրեթե երկու դար՝ Ռուսաստան իմպերիայի տարածաշրջան գալով պայմանավորված, գաղութատիրական/ետգաղութատիրական/սովետական/ ետսովետական հայության համար ռուսը եղել է «փրկիչ», ինչ-որ առումով անվտանգության գարանտ «մեծ ախպերը», իսկ թշնամական «ուրիշը» եղել է նախ պարսիկը, ապա՝ թուրքը (հատկապես Հայոց Ցեղասպանությունից հետո հավերժական թշնամու ստատուսով): Այս նարատիվն աշխատել է անխափան՝ որպես դոգմա և ինքնության հիմնաքար: Հարկ է նշել, որ անգամ հակասովետական ընկալվող Ղարաբաղյան շարժումը չվերածվեց հակառուսականության ալիքի, այլ, հակառակը՝ իր նոր «ազգայնականությունը», ի վերջո, հանգեցրեց «թուրքից», ոչ թե «ռուսից» ազատվելու հին տրամաբանությանը (նորանկախ

15 Բառի ընտրությունը դառը հումոր է, քանի որ ներկայիս իշխանությունները շատ են սիրում տեղի-անտեղի «աննախադեպ» բառը կիրառել:

16 Մեջբերում Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպից, որտեղ նա ողջունել է ցարական Ռուսաստանի գալուստը տարածաշրջան՝ մահմեդականների լուծից քրիստոնյաներին, այդ թվում՝ հայերին ազատելու համար:

Հայաստանում ազգայինի կայացման թիրախ «ուրիշ»-ն այս անգամ դարձավ ադրբեջանցին, որին թուրքացնելով՝ հայությունը ինքն իր փորած փոսում հայտնվեց արդեն պատմականորեն երկրորդ անգամ):

Համատարած հուսահատությունը՝ ազգային իղձերի և երազանքների փլուզման ֆոնին, թույլ չի տալիս հաղթահարել տրավմաները, որ շերտ առ շերտ դարից ավել կուտակվել են և մնացել անամոք: Ինչքան էլ մարդիկ փորձում են իրենց առօրյայում առաջնորդվել «կյանքը շարունակվում է» կարգախոսով, միևնույն է, օրվա վերջում մնում են մենակ՝ իրենց չորս պատի մեջ, անցյալի պահարանից դուրս պրծած կմախքների կողմից հալածված: Ի՞նչ են էս կմախքները և ինչո՞ւ են էդքան վախեցնում, որ շարքային հայաստանցիների մոտ առաջացնում են ինքնության խորը ճգնաժամ:

Կմախքները բազմաթիվ են, սակայն կանդրադառնանք դրանիցից երեքին՝ ունեզրկման վախին, ուծացման վախին և բնաջնջման վախին, որոնց հիքում ընկած է չհաղթահարված ազգային աղետներից եկող մեծ համազգային ֆոբիան՝ թուրքաֆոբիան:

Ուծացման վախը առավել հատկանշական է հայկական Սփյուռքին, որի ավանդական զբաղմունքն աշխարհով մեկ բացի Հայ Դատից «հայապահպանությանը» հետամուտ լինելն է: Սակայն դեմոգրաֆիական իրողություններով պայմանավորված (Հայաստանում ապրում է 2.5 միլիոն, իսկ դրսում առնվազն 3 անգամ ավելի շատ հայ), այս գերակա «հայկական» վախը «ներթափանցել» է նաև մոնոէթնիկ Հայաստան: Վախի սրացումը ենթադրում է, որ Հայաստան կգան այլալեզու, այլադավան, այլազգի շատերը եւ փոքրաթիվ հայերը անմիջապես «կայլասեռվեն», կմոռանան իրենց լեզուն, կրոնը, մշակույթը՝ կթուրքացվեն, կգեյրոպացվեն, կռուսացվեն և այլն:

Երկրորդը՝ ունեզրկման վախն է, որ հիմքում նույնպես պանդուխտական է, բայց կապված է ոչ միայն Հայոց ցեղասպանության չհաղթահարված տրավմայի հետ, այլև սովետական անցյալի և ետսովետական «թալանի»: Այստեղ հարկ է ետ դառնալ ու նշել մի քանի հանգամանք: Առաջինը՝ 90-ականներին, չնայած բոլոր դժվարություններին, մարդիկ սեփականության զգացում ունեին և եթե կռիվ

էին տալիս, ոչ թե «հավերժական թշնամու» դեմ էին կռվում, այլ՝ հանուն իրենց իրավունքների և, հատկապես, սեփականության, ուստի կռիվ էին տալիս ոչ թե միֆական «ուրիշի», այլ իրենց համերկրացիների՝ հարևան ադրբեջանցիների դեմ, որոնց շատ լավ ճանաչում էին: Ինչպես նշում է մարդաբան Աղասի Թադևոսյանը իր հարցազրույցներից մեկում, Ղարաբաղում չէր ձևավորվել սեփականատերերի այն միջին խավը, որ կորցնելու բան ունենար, իսկ կուտակված հարստության սակավաթիվ տերերը անգամ այդ տարածքներում չէին էլ բնակվում: Ուրեմն՝ ունեզրկման, սեփականությունը կորցնելու վախը կմախքներից մեկն է, որ «Ղարաբաղը մերն է» կարգախոսի հիմքում էր (սեփականության իրավունքը առավել կարևորն էր թե՛ ցեղասպանությունից ունեզրկված և այդպես էլ փոխհատուցման չարժանացած հայության, թե՛ կուլակաթափության և սեփականությունը մերժող սովետական կարգերի հաղթահարման համար): Ուստի, Ղարաբաղի հարցի նման հանգուցալուծումը ավելի է սրում այս հիմնարար՝ սեփականազրկման վախը:

Մեկ այլ կարևոր հանգամանք. առաջին պատերազմը ծավալվում էր, այսպես կոչված, Չարիքի կայսրության՝ Սովետի փլուզման և նոր՝ լիբերալ ժողովրդավար աշխարհի մաս լինելու՝ հայաստանցիների մեծ սպասումների համատեքստում: Երկրորդ պատերազմը ընթանում էր, և ըստ որոշ տեսաբանների՝ դեռևս ընթանում է, քանի որ խաղաղության կամ հաշտության պայմանգիր դեռևս չկա, նույն Չարիքի կայսրության վերականգնման՝ մոլագարության հասնող ռևանշի համատեքստում, և Հայաստանը, որ չի անցել ապասովետականացման, լյուստրացիայի կամ դեկոմունիզացիայի բովով, հայտնվել է Ֆրանկենշտեյնի հարսնացուի կարգավիճակում: Այս երկատումը առկա է վերից վար, թե՛ էլիտաների մոտ, թե՛ շարքային քաղաքացիների: Այս համատարած երկատումը շարքային մարդկանց մոտ առաջացնում է ուժեղի կողմը բռնելու կանխատրամադրվածություն, հետևապես՝ մարդիկ վախենում են, որ անգամ մահացու վիրավոր «ռուսական արջը» այնքան ուժ կունենա, որ դաժանաբար կպատժի «դավաճան» հայերին, եթե անցնեն պայմանական Արևմուտքի կողմը, քանի որ մարդկանց մեծ մասը դատում է «սառը պատերազմի» երկբևեռությամբ:

Հանրային մտավորական Մանվել Սարգսյանը հայերին համարում է «հովանավոր փնտրող» ժողովուրդ, այսինքն ինքնության հիմքում

դնում է սեփական անվտանգության համակարգը մշտապես ավելի մեծ տերության հովանոցի տակ լինելը: Մի կողմ թողնելով նման պնդման հիմնավորվածությունը՝ պետք է ասվի, որ մեծ խնդիրների մեջ հայտնված մեծ ախպոր հնարավոր անկումը հայերի մոտ սրում է բնաջնջման հիմնարար վախը, որ անցյալի պահարանից դուրս պրծած կմախքներից ամենասարսափելին է:

Մաշա Գերսենը իր հարցազրույցներից մեկում խոսում է ռուսաստանցիների գիտակցության երկատվածության մասին, մի տեսակ՝ համատարած բիպոլյարություն, որ բնորոշ է ետսովետական գիտակցությանը: Օրինակ, ում էլ խոսեցնես՝ բոլորը Գուլագը չարիք են համարում, Ստալինյան բռնաճնշումները մարդկային հարաբերությունների մակարդակում գրեթե ամեն երկրորդ մարդուն թողել են մի մարդկային արարքի պատմություն, բայց արի ու տես, որ քաղաքական, ավելի «վերացական» մակարդակում հենց էդ նույն մարդիկ, որ քիչ առաջ վկայում էին ստալինիզմի չարագործությունները, հանկարծ վերածվում են մարտնչող ստալինիստների և երկրպագում «ամուր բռունցքի» ժամանակները: Հոմո-սովետիկուսին հատուկ էս գիտակցության երկատումը բնորոշ է նաև հայաստանցիներին: Այսօր, ում էլ խոսեցնես, բոլորն ուզում են խաղաղություն, բոլորը հիշում են պատմություններ, թե ինչպես են ադրբեջանցի հարևանները կամ ընկերները փրկել ինչ-որ մեկի ընտանիքը, ինչպես են հաշտ ու խաղաղ ապրել և այլն, բայց հաջորդ ակնթարթին կարող են ասվածի հարյուր ութսուն աստիճանով տարբերվող պնդում անել՝ «թուրքը մնում է թուրք», «հենց որ ռուսը ոտը քաշի, թուրքը կգա ու մեզ կուտի»:

Մյուս փակուղային երկընտրանքը, որը բնորոշ է երկբևեռ մտածողությանը՝ ժողովրդավարության և «անվտանգության» հակադրումն է: Եթե 90-ականներին ազգային պայքարը՝ հանուն Ղարաբաղի ինքնորոշման, և Հայաստանի ժողովրդավարացումը դեռևս ուղիղ հակասության մեջ չէին գոնե մարդկանց մեծ մասի գլխում, ապա այսօր «անվտանգություն», թե՞ «ժողովրդավարությունը» մարդկանց մեծ մասի գլխում իրար հակընդդեմ բաներ են, հատկապես ավտորիտար Ադրբեջանի հաղթանակից հետո շատ քչերն են ժողովրդավարացումը տեսնում իբրև անվտանգության ամրապնդման երաշխիք:

ժողովրդավարության վայելքը ժողովուրդը չի տեսել, ժողովրդավար հռչակված Հայաստանում տառապանքից, պատերազմներից, տնտեսական ու սոցիալական արհավիրքներից զատ՝ ժողովուրդը շատ չի ցնծացել, ավելին՝ ամեն համապետական ընտրություններին ջարդվել, կոտրվել, կամ կաշառվել, կամ ընտրատեղամասերում ծեծվել է, ետընտրական բողոքի ալիքը բախվել է ոստիկանական բիրտ ուժի ու պետության կողմից հովանավորվող հրոսակների համատեղ ճնշմանը: Հայաստանում ներկայումս բավականին տարածված խոսույթներից է ժողովրդավարության արժեզրկումը, ըստ որի հայաստանցին տասնամյակներով պայքարել է ժողովրդավարության հաստատման համար, ու վերջապես, երբ հաջողվել է իր քվեն ետ բերել՝ կրկին տուժել է, իսկ ահա, Ադրբեջանը, որ երբեք էլ իրեն չի կոտորել ժողովրդավար լինելու համար, տեսեք՝ ռազմական ու տնտեսական անհամեմատ առավելությունը օգտագործել է ջահել ժողովրդավար երկիրը ծնկի բերելու համար ու հաջողել, ուրեմն՝ գուցե ճիշտ է՞, որ առանց ռազմական ուժի՝ ժողովրդավարությունը անպաշտպան, անզոր մի բան է մեր տարածաշրջանում, որտեղ ագրեսիվ վարքը, ուժի ցուցադրումը ավելի ընդունված են, քան երկխոսությունը, որտեղ շարքային մեկը հավատացած է, որ «ուժեղի դեմ միշտ էլ թույլն է մեղավոր», որտեղ շարքային մեկը համոզված է, որ «առանց հովանավորի մենք կորած ենք», ուրեմն՝ ամբողջ քաղաքական դիսկուրսը հանգում է նրան, թե էս ջունգլիներում կամ գիշատիչներով լի պղտոր ջրերում, մեզ նման փոքր ձկնիկները, մեծերին հեշտությամբ կուլ չգնալու համար, պիտի լինեն փշոտ ու թունավոր, կամ էլ ամենամեծի պոչին կպած լող տան, ու «դիվանագիտությունը» ընդամենը ճիշտ պահին մեկի պոչից պոկվելն ու մյուսի պոչը բռնելը կլինի: Ցավոք, սրանք ներկայումս ոչ միայն շարքային քաղաքացիների միջինացված պատկերացումներն են, այլև «փորձագիտական» համայնքում շրջանառվող խոսույթներ, որ հանրայնացվում են բոլոր մեդիաներով:

Կրկին հետ նայելով՝ ասենք, որ աղետի սպասումը սովորական վիճակ է: Նախ, քրիստոնեությունը մեզ խոստացել է Ահեղ Դատաստան, իսկ հայերը հպարտանում են, որ աշխարհի առաջին քրիստոնյա պետականությունն են, հետո՝ ամեն տեսակ ալարմիստները անդադար գուժում են ոչ միայն աշխարհի վերջը, այլև հատկապես՝ հայի վերջը («ուզեցան մի հայ թողնել, և այն էլ՝ թանգարահնում» Պարույր Սևակ, «Անլռելի զանգակատուն»): Ուրեմն, հայկական ընկալումներում

աղետները գալիս ու երբեք չեն գնում, հակառակը՝ միշտ մնում են մեզ հետ: Համեմատաբար թարմ օրինակ է 1988-ի դեկտեմբերի յոթի աղետալի երկրաշարժը, որից հետո Հայաստանի մի զգալի հատված կոչվեց Աղետի գոտի, ու մինչ օրս էստեղ Աղետը հաղթահարված չէ՝ ոչ տնտեսապես, ոչ սոցիալապես, ոչ էլ՝ հոգեբանորեն, ավելին՝ տրավման փոխանցվել է սերնդեսերունդ, և անգամ 88-ից հետո ծնվածները այդ աղետի կրողներն են, ձեզ կպատմեն հազարումի պատմություններ էնքան վավերական ու ճշգրիտ, էնքան սարսափազդու, որ մի պահ կթվա, որ ականատեսի հետ եք զրուցում: Պատերազմն, ինչ խոսք, բնական աղետ չէ, բնության արհավիրք չէ, այլ մարդկային ընտրության արգասիք, բայց պատերազմի ու երկրաշարժի պատմություններում կա մի ընդհանուր գիծ, որ դժվար է չնկատել՝ արհավիրքի անխուսափելիությունը կամ ֆատալիզմը, որ երբեմն կոչում ենք հայի չար բախտ: Ուրեմն, սոցիալ-հոգեբանական ընդհանուր մի համատեքստում ենք, որտեղ Աղետը տարածվում է անցյալի վրա, չհաղթահարված մնում ներկայում և առաջացնում իր իսկ սպասումը ապագայում: Ասվածը վերաբերում է բոլոր աղետներին՝ թե՛ բնական, թե՛ մարդածին: Հիմքում գուցե ցեղասպանության չամոքված ցավն է, որ վերածվել է ազգային մեծագույն ֆոբիայի՝ բնաջնջման վախի, որ անքակտելիորեն կապված է թուրքի հետ, հետևապես՝ թուրքաֆոբիան հայի համար նույնքան բնական է ու «անխուսափելի», որքան բնական աղետները, որ պատուհասել են հային: Ուստի՝ բնաջնջման վախը մեղմվել է Երկաթե վարագույրի գոյությամբ, ապա՝ փակ ցամաքային սահմանի իրողությամբ, բայց Ղարաբաղյան հակամարտությունը թուրքի կերպարը նույնացրել է ադրբեջանցու հետ՝ և առաջին պատերազմի «հաղթանակը» վախի հաղթահարման պատրանք է ստեղծել: Եվ հիմա, բնաջնջման վախը փոխադրվում է դեպի Ղարաբաղի հայություն, ինչ-որ առումով պատմությունը կրկնվում է, և այն, ինչ տեղի ունեցավ առաջին աշխարհամարտի տարիներին Անատոլիայի հայության հետ, գրեթե նույնական նարատիվային կոնստրուկտով վերագրվում է Ղարաբաղի հայությանը, որպես էթնիկ զտման անխուսափելիություն, ինչը ուժեղ կապ է ստեղծում Ղարաբաղի հայության ու ավանդական Սփյուռքի միջև, քանի որ ցեղասպանության տրավման չհաղթահարած սփյուռքահայի համար պատմությունը կրկնվում է, և բոլորը համոզված են, որ Ղարաբաղի հայությունը մի վայրկյանում կբնաջնջվի, եթե նրան սատար կանգնող չլինի: Ուրեմն, դեռևս երկուհազարականների սկզբին հռչակված՝ Հայաստան-Սփյուռք-Արցախ «հորինովի» եռամիասնու-

թյունը քանդվել է, արցախահայության «սփյուռքացում»-ը խանգարում է հայությանը՝ ընկալել Ղարաբաղի հայերին որպես Ադրբեջանի կազմում ապրող էթնիկ փոքրամասնություն: Չնայած, հարևան բոլոր երկրներում նման համայնքներ կան, և հաճախ թվով գերազանցում են Արցախի հայությանը՝ թե՛ Վրաստանում, թե՛ Իրանում, թե՛ Թուրքիայում: Հարկ է նկատել, որ հայերը հարմարված ապրում են ոչ միայն ժողովրդավար երկրներում, այլև շատ ու շատ ավտոկրատիաներում, ինչպիսին է, հեռու չգնանք՝ Իրանը: Էրդողանական Թուրքիան էլ ժողովրդավարությամբ չի փայլում, բայց արի ու տես, որ Ստամբուլի հայությունը ունի պատրիարք ու եկեղեցի, դպրոց, մամուլ, կազմակերպություններ և որոշակի բազմակարծություն՝ փոքր էթնոկրոնական համայնքի ներսում, ներգրավվածություն Թուրքիայի քաղաքական կյանքում՝ թե՛ իշխող, թե՛ ընդդիմադիր շրջանակներում:

Վախը հաղթում է: Անվտանգությունը հակադրվում է ժողովրդավարությանը, ու կրկին հաղթում է վախը, ինչպես դիպուկ բնորոշել է միջազգայնագետ Դավիթ Իսաջանյանը՝ «Հայաստանի անվտանգության կոնցեպտի հիմքում ընկած է վախի եվանգելիզմը»:

Հաղթում է բնաջնջման վախը, ամենակուլ մի վախ, որ նստած է գրեթե ամեն հայի մեջ, վախ, որ փոխանցվել է սերնդից սերունդ՝ տրանսֆորմացվելով, որ տարածվել ու պատել է ամբողջ հայությանը, անգամ այն հատվածին, որոնց նախնիները անմիջականորեն գենոցիդի զոհ չեն եղել: Հենց բնաջնջման վախն է, որ առաջնորդում է պատմության պահարանից դուրս պրծած կմախքների խմբին, այս վախն է, որ ունի կոնկրետ անուն՝ թուրքաֆոբիա:

Երկաթե վարագույրի վերջին առկա փռթիկը՝ Հայաստան-Թուրքիա ցամաքային սահմանը, կարող է քանդվել կամ, հակառակը՝ ամրանալ: Թե ինչպիսին կլինեն վաղվա Հայաստանը և տարածաշրջանը՝ դժվար է կանխատեսել, բայց այդ ապագայի կառուցման գործում Հայաստանի քաղաքացիները կարող են իրենց լուման ու մասնակցությունը ունենալ միայն այն դեպքում, եթե հաղթահարեն անցյալի պահարանից դուրս եկած կմախքների գրոհը, չտրվեն ամենակուլ ազգային վախերին, վերանայեն իրենց ինքնությունն ու նորովի ձևակերպեն ժողովրդավար Հայաստանի կոնցեպտը, որը դատապարտված է չլինել այլևս իզոլացված հայկական «դրախտային գետտո»՝

ռուսի հովանու ներքո, այլ ուզի-չուզի՝ պետք է բացվի, որպեսզի դուրս գա քաղաքական, տնտեսական, դեմոգրաֆիական բազմաշերտ ու բարդ փակուղայնությունից և ինքնության ճգնաժամը հաղթահարի՝ «ուրիշի»-ին ի վերջո «յուրային» դարձնելով ու հաղթահարելով այլատյացությունը:

Տարածաշրջանային անկանխատեսելի զարգացումները կարող են հանգեցնել նրան, որ ժողովրդավարության ուղին բռնած Հայաստանը կրկին շեղվի էդ ուղուց, ինչը արդեն իսկ մեկ անգամ տեղի է ունեցել ինսունականների վերջին, երբ երկրում իշխանությունը մոնոպոլիզացվեց ղարաբաղյան կլանի կողմից: Թաշվյա հեղափոխությունը գողապետությունը ապամոնտաժելու և իշխանությունը կրկին ժողովրդին վերադարձնելու, սահմանադրական կարգը վերականգնելու հաջողված փորձ էր, որի արդյունքում քաղաքացու ընտրելու իրավունքը վերադարձվեց իրեն: Պատերազմը քանդեց շատերի ազգային իղձերը ու երազանքները, ձեռնունայն թողեց, բայց չզրոյացրեց հեղափոխության գլխավոր ձեռքբերումը՝ քաղաքացու ազատությունը: Եթե կմախքներին հաջողվի վերջնականապես գժվացնել հայաստանցիներին, ապա այդ ազատությունը կրկին կվանդակվի, իսկ եթե ինքնության այս ճգնաժամը հաղթահարվի, Հայաստանը բոլոր շանսերը կունենա լինելու բազմազգ ժողովրդավար պետություն և բաց հասարակություն:

Արմեն Օհանյանը *(ծնվ. 1979 թ.) գրող է, մանկավարժ և արվեստագետ: Ներկայումս նա «PEN» հայկական կենտրոնի նախագահն է: Նրա գրելու ոճի վրա էական ազդեցություն է ունեցել նրա քաղաքական ակտիվությունը: ՀԱԿ (Հայ ազգային կոնգրես) սոցիալ-լիբերալ կուսակցության հիմնադիր անդամներից է: Որպես արվեստագետ՝ նա աշխատում է ոչ միայն տեքստերի, այլև շատ այլ թեմաների վրա: Ստացել է փիլիսոփայության բակալավրի աստիճան Երևանի պետական համալսարանում: Ավարտելուց հետո մի քանի տարի որպես ուսուցիչ աշխատել է գյուղական հանրակրթական դպրոցում: Նա նաև 10 տարվա փորձ ունի հասարակայնության հետ կապերի ոլորտում, ՀՔԱ Հայաստանի և Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն-Հայաստան կազմակերպությունների անդամ է:*

ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ԶԵԿՈՒՅՑՆ ԱՅԼ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ
YOU CAN FIND THIS PUBLICATION ONLINE IN OTHER LANGUAGES

Անգլերեն տարբերակ / English version: https://www.freiheit.org/south-caucasus/armenia-and-georgia-security-challenges-or-challenges-security-2022

Հայերեն տարբերակ / Armenian version: https://www.freiheit.org/hy/south-caucasus/hayastan-vrastan-harevanowtyown-anvtangowtyan-martahraverner-te-martahraverner

Վրացերեն տարբերակ / Georgian version: https://www.freiheit.org/ka/south-caucasus/somkheti-da-sakartvelo-usaprtkhoebis-gamocvevebi-tu-gamocvevebi-usaprtkhoebistvis

FRIEDRICH NAUMANN FOUNDATION For Freedom.

Հայաստան

Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամի
հայաստանյան գրասենյակ
ՀՀ, 0009, Երևան, Խ. Աբովյանի փ. 41, գրաս. 11,
Էլ. փոստ՝ Armen.Grigoryan@Freiheit.org; Lousin.Martirossian@Freiheit.org

9 789939 115863

freiheit.org